


Վարդս Գևորգի

9W

Վերականգնութեան

891-99
Դ-23

Առաջնաւոր



891-99

Դ-23

ՄԱՐԳԱՐ ԳԱՎԹՅԱՆ

22 JUN 2007

6 DEC 2011

ԽԱՐ. ՊՈՎԵԼԻ ՏԵՂ ՏԱՐ

ՀԿԸ 140 1

891-54-32

ՎԵՐՋԻՆ ՃԻՇԸ



Ա.ԶԵՐՆԵԶԵՐ
Բագու — 1935

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
29.03.2013
Հ 380 2

27118

ՎԵՐՋԻՆ ՃԻԶԲ

1. ԱՌԱՋԻՆ ԼԻԲԻՔԱԿԱՆ ԳԼՈՒԽ

Ամեն գարնան մեր յերկրում գողգողալով մաղում են անձրեները և պղտորվելով հորդանում են գետերը: Անձրեաջը սպիտակ կաթիլները ձգում, զետնի խորքից հանում են կանաչ խոտերին ու սնում են նրանց:

Են յերկրում ամեն գարնան ծաղկում և սալորենին ու բացվում են կարմիր վարդեր: Սալորենու սպիտակ ծաղիկները փոքրիկ մանկիլներիդ նման ժպտում են քեզ ու վարդերը մնվում են սրտիդ կարկարմիր արյունով:

Հենց այդ ե պատճառը, վոր ամեն գարնան յես յերկար նայում եմ դրանց ու խորը շնչելով ասում.

— Հավ ե գարունը մեր յերկրի...

Այդպես, նայում եմ յես և շրջվում գնալու, հանկարծ աչքովս ե ընկնում կուժն ուսին դրած, սալորենու ծաղիկների նման սպիտակ չարսավում փաթաթված մի կին և շտապ հեռանում:

Յես յերկար նայում եմ նրա հետեից, մինչեւ վոր նա իմ տեսողությունից միանգամայն հեռանում ե, և այդ ժամանակ ուղեղիցս ծորում ե մի կոլ հիշողություն ու կաթելով սիրտս՝ ձնշում ե նրան:

Յես պոկում եմ ծառի մի կանաչ տերեւ, ուժեղ վեր եմ փչում, վորպեսզի նա իր հետ տանի հուշերիս



Կ 3393.63

ծանրությունը, բայց հենց վոր տերեւ գետնին և ընկ-նում, կրկին հիշողությունը ծանրանում և սրտիս վրա և ամուր սեղմում:

Յես հիշում՝ եմ հինայած միրուքով մի ծերունու, հիշում եմ ժպտուն աչքերով մի մանկահասակ կնոջ և սկսում եմ ահա նրանց հետ զրուցել...

2. ԱՐԵՎԻ ՄԾԿԸ

—Հը Դանել, տղիդ բերա՞ր,—առանց տեղից շարժ-վելու՝ հարցնում ե հաջի Արբաս աղան:

—Հրամմանք ա, Հաջի աղա, բերա, —հայրս թեկից բոնելով առաջ ե քաշում և յես վորպես մի ծախու ապրանք մոտենում եմ—ահա, սա յա:

Հաջին դանդաղությամբ զլուխը բարձրացնում ե, վոտքից մինչև զլուխ նայում ինձ և ասում:

—Լավ, վնաս չի, մեր Խրդայի հետ զոմեշները կպահեն:

—Հաջի աղա—ամաչկոտությամբ առաջ ե գալիս հայրս—միայն խնդրում եմ, մինուճար ա...

—Ե՛—զարմանում ե Հաջին—չե, զու լափ արխային մնա, հացը ուտելու յա, իր համար աղատ ման զա, ինչ պիտք ա լինի:

—Շատ շնորհակալ եմ—ասում ե հայրս և դառնում գեղի ինձ—դու կմնաս ըստեղ: Զհուսահատվիս, բան չկայես շուտ-շուտ կգամ քեզ տեսնելու: Թեղ լավ պահիր, վոր չմըսես ու չիլանդանաս:

Ապա յերկար խոսում ե նա ինձ հետ, սառնու-թյամբ ձեռքս բանում ու զուրս գնում: Յերբ նա վոտք դուրս ե գնում դարպասից, յես տիրությամբ նայում եմ նորս հետեւից ու թվում, թե սրտիցս ինչ վոր բան պակսեց...

—Դդա, քանի աարեկան ես,—հորս հեռանալուց հետո հարցնում ե Հաջին:

—Տասնիկրեք:

—Թուրքերեն կարողանում ես^o խոսալ:

—Քիչ միչ:

—Լավ—ասում ե Հաջին ու լուսմ: Քիչ անց նա վոտքի կանգնելով ավելացնում ե.

—Եստեղ ման յիկ, մինչև իրիկուն մեր տղաները կհավաքվեն:

Նա մեջքը կզած քայլում ե ու քիչ հեռանալուց հե-տո գառնալով ասում:

—Դու կարող ես^o զոմեշ լողացնել:

—Հա:

—Լավ. Խրդայի հետ կինես: Քո հասակին տղա յա: Նրա հետ առավոտը շուտ գոմեշները կտանեք: Գոմեշ-ներին լավ պետք ա պահեք: Որեկան յերեք անգամ մաքուր կլողացնեք, թե չե յես անտեղի հաց չունեմ համ...

—Լավ:

Եեվ գողգողալով հեռանում ե:

Հաջի Արբաս աղան մոտ վաթսուն տարեկան, հի-նայած, զեղին միրուքով մի մարդ ե:

Նրա հասակի մեծությունը յերեւում ե միայն այն ժամանակը, յերբ նա կուցած և գողգողալով, չուստերը զետնին քսմանով քայլում ե:

Նրա գնալուց հետո յես անվստահ կերպով նայում եմ չորս կողմա ու շրջում բակում: Բակն ընդարձակ և ու բարձ պատերով պարիսպ քաշած:

Բակի մեջտեղի լայն առվով անցնում ե պղոր-ջուրը, իսկ տերեւախիտ ծառերը կտացած՝ նրա հոսան-քին են նայում:

Հաստաբուն թթենին առվի ջուրը յերկու հավասար մասերի յե բաժանել ու վեր սլացել: Մի ճպուռ, կարծես թե արևի տապին չդիմանալով, ուժգին ճռնչում ե:

Յես կկոցած աչքերով վերև եմ նայում, իսկ քըր-տինքի մի կաթիլ ճակատից զլորվերով ընկնում ե քթիս ծայրին ու այնտեղից ել հանդարտությամբ կաթում ներքև: Միայն այդ ժամանակ եմ զգում, վոր ծարավից լեզուս չորացել ե ու բերանում դժվարությամբ ե շարժվում:

Յես ախորժանքով նայում եմ խիտ տերեների արանքից կանաչին տվող շլորներին, բայց չեմ համարձակվում մոտենալ: Այդ ժամանակ սպիտակ չարսավի մեջ փաթաթված, չստերի կրոնէները գետնին ըրխկչնկացնելով, բակ ե մոռնում մոտ հիսուն տարկեան մի կին: Նա ուշադրությամբ չարսավի տակից նայում ե ինձ ու հարցնում:

— Ո՞վ ես:

— Հայ եմ: Հաջի աղայենց գոմեշները պետք ե պահեմ:

Նա թողնում ե ինձ և ուզում ե հեռանալ, բայց յես հարցնում եմ.

— Եստեղ վրեն ե խմելու ջուրը:

— Եղ մեծ առուն չես տեսնո՞ւմ:

Յերբ նա հեռանում ե, յես ապշած՝ առվի պղտոր ջրին եմ նայում:

Ճիշտ ե, իրենք ել են այդ ջրից խմում, բայց նրանք նախ առավոտը շուտ են վերցնում, յերբ դեռ ջուրը տաքացած չի և հետո լցնում են քարե ավազաների մեջ, այնտեղ պարզվում ե հետո խմում են:

Յեվ յես յերկար ժամանակ առվից հոսող պղտոր աղբախառն այդ ջրին եմ նայում:

6

Յես հիշում եմ մեր գյուղը, իմ ընկերներին և սարբերից կարկաչող զուլալ աղբյուրները...

Արեւ թեքվում ե: Ճպուռը լուռ ե: Թեթև թոչունի նման, արեւի դեղին քուլաներն սկսում են թթենու գագաթին ուրախ վեր-վար անել: Զովն ընկնում ե և յես զուրս եմ զալիս պատի գլխից արեւի մահը դեմու...

Նա նախ գեղնում ե, շղերը ուղղում վեր, դեպի կապույտ յերկինքը, ապա կարմրելով, խորասուցվում ե հեռու, շատ հեռվում կուռակված մի շերտ, սպիտակ բամբակի նման թեթեվ ամպի հետեւ:

Յես զարմացած նայում եմ յերկար ու մտածում: Յես մեր գյուղում չեյի տեսել, վոր արեւ մայր ե մտնում միայն ամպերի հետեւ:

Նա յերեկոյան գեմ, մեր գյուղում ել ե միշտ դեղ նում, բայց առանց այդպիս կարմրելու մտնում ե սարի հետեւ ու անհետանում: Ապա հետեւյալ որը նա կրկին դուրս ե գալիս դիմացի սարի հետեւից և սկսում հանգստությամբ վեր բարձրանալ:

Իսկ այստեղ, այս համատարած հարթության վրա, արեգակը փորտեղից պետք ե դուրս գա: Չե վոր այստեղ վոչ սար կա և վոչ ել բարձր մի վորեն բլուր: Տարորինակ ե: Յերեւի նրա շողերը հանկարծ յերկնքից են թափում և սկսում ե լուսանալ:

Այդպիս մտածում եմ յես, մինչեւ վոր արեգակը միանգամայն անհետանում ե և հարձակվում ե մութը:

Գյուղում սկսում ե սայլերի ճռոցն ու անասունների բառաչը: Բարձրանում ե մի ընդհանուր փոշի ու փաթաթում վող գյուղը:

7

Սայլերից հետո գալիս են յեղները, կովերը, տպա
զոմեղները:

Այդ ժամանակ ճրագը ձեռքին բռնած, զողովրա-
լով գոմն և մտնում Հաջին, ստուգում ամեն ինչ և
վերջում ասում.

— Յեկեք հայներդ տարեք...

ՅՆԹԲՔԻ

Նրանք վեց հոգի յեն: Բոլորն ել հոգնած, պառկել
են գոմի մի անկյունում պատրաստած փոքրիկ բար-
ձրության — «սաքու» — յի վրա և աշքները հասել կեղ-
տոտ ոճորքին:

Մեկը զլուխը կախ, տնքտնքալով արեիներն ե
թափ տալիս և հետն ել մելամաղճոտությամբ յերգում.

Այ կը աղըն Զարգալամ.

զաբիթ կոյմիր ման զյալամ ~
ջեյրան ման ոլլամ...

Իսկ մյուսներն ել հենց այնպես պառկած տեղ-
ներիցը ձայնակցում են.

Կալայդըմ ալլահ, կալայդըմ,
ո յարի բիր դա զյորայդըմ
զյորանդան սոնրա ոլայդըմ...

Ապա նազիմը — լայնաթիկունք, սեաչյա և տոռդ,
մոտ քաններկու տարեկան մի տղա, վոտքի կանգնե-
լով, գնում և բերում ե կճուճով կերակուրն ու գնում
կենտրոնում: Իսկույն շրջապատում են կճուճը:

— Ինչու չես գու յել գալիս — տեսնելով ինձ հեռ-
վում կանգնած, ասում ե նազիմը:

— Ի՞նչ, նա մեզ հետ մ ուտելու — զարմացած՝ իս-
կույն հարցնում ե մոտ քառասուն տարեկան մի պար-

սիկ: Դա սայլապան Խուղին ե — չափազանց սկ, նիհար
և ժամանակից ավելի շուտ ծերացած մի մարդ:

— Ի՞նչ ա վոր — ուշադրությամբ նրան նայելով
հարցնում ե նազիմը:

— Վանց թե ինչ ա, մենք հայի հետ մի ամանից
Ենք ուտելու:

— Վախենում ես նրա ձեռք տվածը բողազումդ մնա:

— Եդ չե:

— Բա զազմը, միասին տված ա, միասին ել ուտե-
լու յենք:

— Եդ տեսակ որենք չկա — հանկարծ բռնկվաւմ և
Խուղին. — Նրան ջոկ պիտի տալ:

— Զենդ կամաց հանի. չես ուզում, ինքդ ջոկ կեր,
մեր ախորժակը քեղանից չի կախված:

— Դե մի համշարուն նայեք ե, — վրդովված ասում
ե մի ուիշը, — մենք հա քեզ հետ ուտում ենք բավա-
կան չի, եդ ինքդ ես հրաժարվում, — ասում ե նա և
կճուճի կերակուրը միանգամից շուր և տալիս պղնձե
մեծ անոթի մեջ — կարող ես քեզ համար աման ճարել
և ջոկ ուտել:

Ուրիշ անոթ չկա: Պարսկէլ ջղայնացած ինքն ի-
րեն խոսում ե և խոսված մի կողմ քաշվում: Նա հենց
այդպիս ել քաղցած պառկում ե, սպառնալով, վոր
վազը Հաջուն կասի:

— Զենդ, քոսոտ համշարի, ուզում ես Հաջուն ասա,
ուզում ես նրա բաջուն: Վախեցող չկա, չես ուտում
պրծավ:

Հետո, յերբ վերջացնում ենք ուտելը, նազիմը գա-
տարկ անոթը մեկնելով նրան, ասում ե.

— Այ, արի լիզիր:

— Կորիր, մուրտառ հայվան: Ինքդ մուրտառ ես,
ուզում ես ինձ ել մուրտառես:

Յես պառկում եմ գոմի սաքույում՝ Նազիմի կող.
քին, բայց ամբողջ գիշերը քունս չի տանում:

Ներսի տաքն ու ալբահոտը մի կողմից, մոծակ-
ների խայթն ել մյուս կողմից՝ թույլ չեն տալիս,
վոր աչքերս ծածկվեն:

Այդտեղ, լայն տափարակի վրա ընկած այդ մեծ
գյուղում, ամառը դրսում չի կարելի քնիլ:

Յերբ մարվում ե արկը, յերբ ընկնում ե մութը,
բարձրանում ե Արաքսից յեկող ալվազախառը քամին:
Նա տանիքների վրայից վերցնում ե այն բոլորը, ինչ
վոր հանդիպում ե, իսկ բակերն ել լցնում ե ավազով:

Բայց յերբ վոր ել քամի չի լինում, դրա տեղը
բռնում են յերկար կնճիթավոր մոծակները:

Նրանք հարձակվում են մարդու վրա և անվերջ
խայթում: Անգամ հաստ հագուստի տակից՝ ուռչում ե
նրանց խայթած տեղը:

4. ՅԵՐԿՈՐԴԻ ԼԻՐԻՔԱԿԱՆ ԳԼՈՒԽ

Անցյալ տարի, յերբ արդյունաբերական այն մեծ
քաղաքից ինձ մի ամսով գործուղել եյին տեղերում
գաղնանցանի կամպանիա տանելու, շրջանային կոմի-
տեյում, պատահաբար, հանդիպեցի Նազիմին...

Նա կրկին հաղթանակամ եր ու մեծ մարդ եր դառել:
Յերբ նրան պատմեցի, թե ուղիղ ինսը տարի առաջ,
ամառը Հաջի Արքաս աղայի գոմեշներն եյի պահում,
նա իսկույն ինձ ձանաչեց և մենք ամուր, չափազանց
ամուր սեղմեցինք իրար ձեռք: Հետո մենք շատ խո-
սեցինք:

Նա ինձ պատմեց, վոր ինքը հենց այդ ժամանակ
ել կուսակցության մեջ ե յեղել, բայց այդ մենք չենք
իմացել:

— Ի՞նչ ասեյի, բջիջը նոր եր կազմակերպվել և
վոյ մեկս ել մեր անելիքը լավ չեյինք պատկերացնում:
Կուլակներն ել հենց վոր իմանում եյին, թե կուսակ-
ցական ենք, այլևս աշխատանքի չեյին ընդունում:
Հետո քաղցած մւր գնայինք: Ե՛, դա մեր շրջանի հա-
մար մի այնպիսի ժամանակ եր, վոր դժվար ե հիշելը:
Մեր նոր կազմակերպված կոմքջիջին ի՞նչ ազգեցու-
թյուն ուներ գյուղում, մանավանդ մեր գյուղի նման
մի գյուղում:

Հետո նա ինձ ասաց, վոր անցյալ տարի Հաջի
Արքաս աղային կուլակաթափի ժամանակ Սիրիք են
աքսորել, ուր մինչև այժմ ել ապրում ե այդ ծեր
գամփուը:

Իսկ յերբ յես Նազիմից բաժանվել եյի, նոր միայն
հիշեցի Խրդային... Սաքինեյին...

5. ԽՐԴԱ

... Զնայած իմ սաստիկ հոգնածության, վոր յես
յերկար ճանապարհ եմ յեկել այդ գիշեր դարձյալ իմ
քունը չի տանում:

Աղքահոտից, լույերի և մոծակների խայթոցից ստիպ
ված, յես մի քանի անգամ գուրս եմ գալիս, բակից
անցնող առվի ջրում լվացվում և կրկին վերադառնում:

Հետո մեր գլխավերեկ՝ յերբորդ անգամ թեվերը
թափահարելով կանչում ե աքաղաղն ու մենք Խրդայի
հետ գոմեշները գուրս ենք տանում:

Խրդան՝ կարճահասակ, ձայնը փորն ընկած, բայց
գեղեցիկ մի տղա յե:

Նրա իսկական անունը Իբրահիմ ե, դեռ ավելին.
Նա Մաշաղի Իբրահիմ ե. բայց հասակի կարձության
պատճառով՝ Խրդա յեն ասում:

—Փոքը ժամանակս հայրս ինձ Մաշտղ և տարել, —պարծենալով ասում են նա, —բայց դրան վոչ վոք չի հավատում:

Խրդան հորը չի հիշում—նա շատ վազուց են մեռել: Նա գեռ չեր ծնվել, վոր հայրն իրեն վորը են թողել: Հետո նրանք ազգամիջյան կոլիներին գաղթել, այդ գյուղն են յեկել և մայրն ել այնտեղ են մեռել:

Նրանք—ինքը և իրենից մեծ քույրը՝ Սաքինեն, վորը են մնացել և սկսել են գյուղում վորորմություն հավաքել:

Մի անգամ, յերբ նրանք յեկել են Հաջու տնից վորորմություն ինըրելու, Հաջին տեսել են Սաքինեյին և նրան կնության ե առել:

Արդեն յերրորդ տարին ե, վոր Խրդան քրոջ հետ յեկել ե Հաջու մոտ և գոմեշներն ե պահում:

Այսպէս, կեսորքա տաքին դաշտում նստած, պատմում ե Խրդան և մեջքի վրա մեկնելով չոր հողի վրա, աչքերը հառում ե արեին ու ասում:

—Ե՛, հալա որ շատ կա, յերբ ա մթնելու, ենոքս սոված եմ...

—Բա լավ, զու վոր Հաջի աղայի բարեկամն ես, նա ի՞նչու յա քեզ եսպես պահում—հարցնում եմ յես:

—Ե՛, հա մի տես են զուշն ուր ա բարձրացել հա—առանց իմ հարցին պատասխանելու ասում ե նա և մատը վեր բարձրացնելով ցույց ե տալիս յեթերում լողացող սև թռչունին:

—Հմի նրա համար տաք չի լինիւ ենտեղը մեր գեղի նմա սարին ա:

—Դու ձեր գեղը հիշում ես:

—Հա, ենտեղ շատ գիլաս եր լինում: Յես բարձրանում եյի բարձր գիլասների վրա և կարմիր-կար միր գիլասներն ողերի նման կախում ականջիցս...

Յես մտքով տեղափոխվում եմ մեր գյուղը և պատկերացնում այն, ինչ վոր պատմում ե Խրդան:

Յերեկոյան, յերբ մենք նստում ենք ծանրաշարժ գոմեշների ուսին, յես կրկին հարցնում եմ,

—Եյ, Խրդա, բա ինչու չի առավոտները քույրէ քո բաժին հացն ավել դնում:

—Բա վոր Հաջին իմանա:

—Իմանում ա իմանա, քո վիեսան չի, ի՞նչ կա վոր:

—Զե, թողնիլ չի: Նա քրոջս ենքան ա ծեծում... ինչ փեսա... Զի թողնում, վոր քույրս տնից մի ուրիշ տեղ գնա: Փողոցի կողմի պատուհանները միշտ փակ ա պահում, վոր գուրս հնայի: Հենց մենակ նա յա. նրա մյուս կնանիքն ել են քրոջս ծեծում: Ամենից շատ նըրան են բանեցնում և ամենից շատ նրան են ծեծում...

—Վոր քրոջդ ծեծում են, զու ի՞նչ ես անում:

—Ի՞նչ պետք ա անեմ, քաշվում եմ գոմը և լաց լինում:

—Քույրդ քեզ մոտ Հաջուցը շատ ա գանգատվում:

—Զե, նա վոչինչ չի ասում: Համ ել յես նրան վորտեղ եմ տեսնում վոր: Եկի նըրա ոթախը մի հետ ել ա վոտ չ' մ դրել:

—Հաջուցն ես վախենում:

—Ե՛հ—զգոնությամբ ձեռքը թափահարում ե նա ու խփում գոմշի ուսին—ոհո, ա հո, շան անտեր, շուտ գնա, մթնեց ե...

6. ՍՈՎՈՐԱԿԱՆԸ

Այնուհետեւ շատ բան ինձ համար սովորական և զանում: Ցուրաքանչյուր առավոտ աքաղաղների յերրորդ կանչի հետ վեր եմ կենում և Խրդայի հետ գոմեշները զուրս ենք քշում:

Յերեկոները հավաքվելուց հետո ձրագը ձեռքին
դալիս և Հաջին, ամեն ինչ ստուգում և ասում,

—Բան ման չի պատահել հու իութ, եյ, դղա,
դոմեշները լողացրել եք:

—Հրամմանք:

—Եղի ինչպիս ա, ասում ա ուրիշի ցուլերի հետ
կովեցնում եք:

—Զե, ըտենց բան չկա.

—Զնեմ, չիմանամ հա. գլուխներդ կջարդեմ: Եսոր
ուր եյթք տարել արածացնելու—քիչ հետո հարցնում
և Հաջին:

—Զաղացների տակը:

—Զաղացների տակը^o. հա, լավ ա. ենտեղ ջուրը
բոլ ա: Բա ջաղացպան Ոսմանը ձեզ պաղարձ չտվից:

Հաջին ծիծաղում ե: Նա զիտե, վոր վախից Ոս-
մանը վոչվոքի պաղարձ չի տալ: Նա իր ամենահին
ջրաղացպանն ե, և այդ լավ գիտե Հաջին:

Մենք լուռ ենք:

—Հա, այ տափը մտած Ոսման, յերեվի բոլշեննիկ
աղասել, չի ուզո՞ւ հարամություն անել: Եյ, ըստնց
կիրնեն հա: Զեղանից ել մվ ա բոլշեննիկ, վոր հարա-
մություն չի անում, չի ուզում ուրիշի ապրանքով
ուրիշին լավություն անել:

Վոչվոք չի խոսում: Բոլորս ել լուռ ենք:

—Բոլշեննիկ, չե, մի մասրի ճաշ, թողեք եղ դա-
տարկ-մատարկ բաները: Գործներիդ կացեք: Աշխատե-
ցեք մի կտոր հացի տեր լինել: Թե չե շայթանությու-
նից զատ դուրս չի գալ: Յեթե դուք դրանց լսեք, սո-
ված կմեռնեք: Ասենք ինձ նման մեկը վոր չինի, դուք
մոտ կաշխատեք, ձեզ մվ մի կտոր հաց կտա:

—Դուզա... կամաց շշնջում ե պարսիկը:
Նազիմը հոնքի տակով նայում ե նրան ու գլուխը

կախում:

—Բա դուզ չելած, մի սուտ ել պետք ե ասեմ:
Յես չինեյի դու հիմի վոր ջանդապումը կլինեյիր:

—Դուզ ա ... կրկին ասում ե պարսիկը:

—Դե լավ անսակերի գլուխը վորդով ե լիքը, խե-
լոք կացեք, մի կտոր հաց կերեք: Հմի վեր կացեք
քնեք, վոր առավոտյան շուտ վեր կեր կենաք:

Հաջին դողդողալով դուրս ե գնում:

Յերեկոները հավաքվելուց հետո, յերբ տղաները
հոգնած չեն լինում, ընթրում են (հաճախ ցամաք
հաց, յերբեմն պանիր, հազվագյուտ գեղքերում՝ մսով
բողբաշ) և սկսվում ե կատակը:

Սրբակիսի գեղքերում ամենից շատ ձեռք են առ
նում Խուզուն՝ ծեր պարսիկին:

Նազիմը խլում ե գլխարկս և գնում նրա գլին ու
ասում:

—Աման, համշարի, հայի գլխի մեռնը թափեց
քեզ վրա, հայացար, Վայ, համշարի:

—Տղեք, համշարին հայացավ:

—Ռխտը մոլլա յել վոր բերենք, սրան ելի չեն
կարող փրկել:

—Տղեք, հաւ մի տեսեք հայի տերտերը վորքան
մեռն ա քսել սրա գլխին, վոր փափախի մեջը լցրել
ա, հմի յել համշարու գլխիցն ա ծորում:

—Դե բոլ ա, յես ձեր մոր ծիծը կտրեմ. բոլ ա-
ջղայնացած ասում ե պարսիկն ու դուրս գնում:

Կամ թե ընթրեիքի ժամանակ յերբեմն նազիմը մեր-
բաժնից մի զգալ զցում ե նրա բաժնի մեջ (իմ պատ-
հառով նա այլևս մեզ հետ չի ճաշում, նա մեծ հանը-

մից մի կոտրած անոթ ե խնդրել և միշտ իր բաժինն առանձին ե վերցնում) և ասում:

—Աման, համշարի, փայտ մուրտառվեց, ել վանց ես ուտելու:

—Արա, այ հորդ գերեղմանին ջուր շաղ տամ՝ բոլ ա, թող մի հալալ հաց ուտենք, փյա...

Այսպես ջղայնանում ե Խուզին, հետ քաշվում և մենք բաժինը խառնում ենք մերին...

Գիշերը, յերբ պառկում ենք քնելու, Նազիմը ձեռները սեկնում ե դատարկ ողի մեջ, հետո սեղմում կրծքին ու ասում:

—Լսիր. Մաքինեյին ճանաչում ես:

—Ծը...

—Խրտայի քույրն ա: Մեղքս գալիս ա. Հաջի շան վորդին շատ ա ծեծում: Թույլ չի տալիս տնից դուրս գա: Ենպես կնկանը թողնում ա, ինքն ախմախություն անում...

Նազիմը լսում ե և յես շրջվելով մյուս կողքիս վրա, ձեռքս դնում եմ գլխիս տակ: Այդ ժամանակ նա խորը հոգուց հանելով, ասում ե.

—Ախ, հենց մի հետը խոսայի...

7. ԱՆՍՈՎՈՐԸ

Որերն ավելի յեն տաքանում: Արտերը կարմրում են ու հասկերն ուռչում:

Հնձվորներն այլևս տուն չեն վերադառնում: Նրանք գիշերում են արտում, իսկ գիշերը հենց վոր լուսինը շրթունքը ցույց ե տալիս, նրանք մանգաղները կրկին փայլիլեցնում են սպրդնած լուսնի շողերի տակ:

Իրիկունը, ընթրիքից հետո, ճրտգը ձեռքին մըտ-նում ե Հաջին:

—Հը, գոմը մաքուր ա, ամեն ինչ վերջացրել եք: Նա առանց պատասխանի սպասելու, ինքն ե ստուգում: Նա նախ նայում ե անասունների տակը, ապա ախոռները:

Ամեն ինչ մաքրած ե ու աղբը դուրս տարած: Սակայն այդ միմնույն ե, Հաջին պետք ե խոսի, յերբեք առենց նկատողության դուրս չի գնալ:

—Ախոռները լավ չեք մաքրել. յեղների տակը չոր փեյլին չի շաղ տված: Սա ի՞նչ ա, դուք ձեզ լափ կորցրել եք: Իմացած յեղեք, դուրս կշպրտեմ և շան նման կկոտորմաքեք: Յես ձրի հաց չունեմ:

Սակայն մենք լուռ ենք, ի՞նչ ասել:

Հետո Հաջին մոտենում ե ինձ ու ասում:

—Եգուցվանից դու տանը կմնաս: Գոմեցները թող մենակ Խրդան տանի: Տանն ել հազար ու մի աշխատանք կա: Դու հնձվորների հացը կտանես, վոր նրանք մեկ ել ժամանակ չկորցնեն զան տուն: Արտերը վաղանել են, պետք ե շուտ հավաքել: Հասկացար:

—Հա:

—Լավ, —ավելացնում ե նա—դե հիմա դուրս յեկեք, դուրս յեկեք յերեսներիդ մի քիչ քամի տա, յեկեք պառկեք, վոր առավոտյան շուտ վեր կենաք:

Մենք բոլորս ել լուռ, կատարում ենք նրա կամքը:

—Խրդա դու մի գնա. են ձիու ախոռը լավ չի մաքրած, դու գնա մի լավ մաքրիր:

Խրդան մնում ե, իսկ մեր գնալուց հետո մեկը կարծես թե ինքն իրեն յերգելով՝ անում ե.

—Աման, այ Խրդա, ելի պետք ե գետնին պառկած հող լիզես, աման, այ Խրդա, ելի պետքն ե յեղունդներով հող չանգուս:



—Եղինչու յես եղպես ասում, —հետաքրքրությամբ
հարցնում եմ յես:
—Նազիմը կասի:
—Նազիմ, ինչու յա եղպես ասում:
—Համշարուց հարցըու:
Իսկ յերբ դիմում եմ պարսիկին, նա ասում ե.
—Վզրովկետե Հաջին գոմ գալիս նրան պառկե-
ցնում ա գետնին և ասում ա՝ հող լիզիր...
—Բա ինչու յե...
—Յեսիմ. ինքդ գնա տես:
—Ինչու, հենց հիմա լիզում ա, վոր:
—Հա, հենց ես սհաթիս:
—Վա...
—Զան, բա մի գնա տես:
Յես չափանց հետաքրքրությամբ ներս եմ մըտ-
նում, իսկ տղաներն սկսում են հետեկցս ծիծաղել:
Գոմը մութ ե: Հաջու ձեռքի ճրագը այլևս չի վառ-
վում: Միայն յերկար սյան նման լուսնի լույսն և
վոչինչ չեմ տեսնում:
Քիչ ականջ գնելուց հետո, ձիու ախոռի մոտից
լսում եմ խառը փսփսոց և մոտենում եմ: Ո՛, զար-
մանք: ... Խրդան պառկել ե, իսկ Հաջին՝ նրա վրայից...

8. ՍԱՔԻՆԵՆ

Այնուհետե թողնում եմ գոմեշները...
Ամեն ուր լուսանալուն պես իսկույն բակն եմ գուրս
գալիս և սկսում եմ ավել, աղը դուրս տանել,
ջուր բերել և ելի հազար ու մի աշխատանք: Իսկ
յերբ վերջացնում եմ այդ բոլորը, արևի սուր շողերը
դուրս գալով ծեծում են Սուրիս հանըմի պատու-

հանի ապակիները: Սուրիս հանըմը (Հաջի աղայի
առաջին կինը) պատուհանից վիզը յերկարացնելով
կանչում ե.

—Դու, այ դու (նրանք բոլորն ել ինձ այդպես են
կոչում) յեկ հնձվորի հացը տար:

Դա մոտ քառասուն տարեկան, սև ու նիհար մի
կին ե: Նա յե հսկում Հաջու տան տնտեսական բոլոր
աշխատանքները. ամեն ինչ նրա ձեռքով ե անցնում:
Հաջու մյուս կանայքն իրավունք չունեն առանց նրա
գիտության մի փորնե բանի ձեռք տալ:

Հաջու յերկրորդ կինը մոտ յերհուն և հինգ տարե-
կան ե, բայց ամեն ինչի անընդունակ: Նա թոքախ-
տից հյուծվել ե ու միայն վոսկորներն են մնացել: Նա
միշտ նստում ե բակի կենտրոնով անցնող առվի մոտ
և տիրությամբ նայում պղտոր ջրերին:

Իսկ Սաքինեն, Խրդայի քույրը, ամենաջահելն ե,
քսանյերեք տարեկան և տան աշխատանքի մեծ մասը
նա յե կատարում:

Վորովհետե Հաջու կանացից ամենաջահելն ու
ամենագեղեցիկը Սաքինեն ե, գրա համար ել Սուրիս
հանըմը խանդից նրան տանել չի կարողանում և
ամեն մի հարմար առիթով նրան ծեծում ե: Իսկ Սա-
քինեն այդ բոլորը լուսությամբ տանում ե ու անտը-
տունջ աշխատում:

Այդ որը հնձվորների հացը Սաքինեն ե պատրաս-
տում: Տան ներքնահարկում առաջին անգամ տեսնում
եմ նրա բաց գեմքը, սև-սև, թախծոտ աչքերը, կար-
միր լավաշ հացի նման բարակ շրթունքներն ու սիր-
տը առաջին անգամ իմ կյանքում զգում ե կանացի
մարմնի հրապույրը...

Նա քնքույշ մատներով ջուր և ջաղ տալիս հացի
վրա, կապում մեծ սուփրի մեջ և նայելով դեմքիս
հարցնում ե:

—Անունդ ի՞նչ ե:

Յես ասանց նրան նայելու ասում եմ անունս:
—Վաղմեց ես մեղ մատ աշխատում:
—Յերկու ամիս ա:

Նա հացի կապոցը տալիս է ինձ, մի պահ մտա-
ծում և կրակոտ հայացքով, լուս սկսում է ինձ նայել:
Հետո նա հանկարծ թողնում ինձ և արագությամբ
դուրս գալիս: Յես մի պահ շշմած կանգնում եմ մտած
կոտ և հացի կապոցը թեվիս տակն առնելով, ներքնա-
հարկի սանդուխքներից վեր եմ բարձրանում:

Կեսորին, յերբ արել կանգնում ե զենիթում, յես
գալիս եմ հնձորների ճաշվա հացը տանելու:

Այս անգամ՝ դարձյալ Սաքինն է գալիս:

Նա կրկին նայում ե ինձ, պղնձե մեծ անոթի մեջ
լցնում ե գոմիշի պինդ մածուն և հացն ե թրջում:

Այդ ամբողջ ժամանակ յես ակնապիշ՝ նրան եմ
նայում: Սիրաս զարկում ե. չնչառությունս դան-
դաղում ե, կարծես թե յես չեմ չնչում:

Նա վերջացնելուց հետո անոթի մածունն ու ծա-
լոծ հացը մի կողմ է դնում և ասում:

—Յես գնում եմ իմ ոթախը. զու յել յեկ...

Նա շտափ կերպով հեռանում ե, իսկ յես աչքերու
գետնին հառած մտածում եմ.

—Ինչո՞ւ գնամ վոր...

Յես գիտեմ, վոր չաջի աղայի կանացից յուրա-
քանչյուրն ել առանձին սենյակ ունի: Քիչ մտածե-

լուց հետո յես տարակուսանքով շարժվում եմ դեպի
փոքր հանըմի առնձնասենյակը:

Բակում վոչ վոք չկա: Դարձյալ ճպուռն և թթենու
գագաթից միալար ճչում:

Յես շտապ անցնում եմ բակը, առանց ծեծելու՝ բայ
եմ անում նրա առանձնասենյակի դուռը և մնում դար-
մացած: Դա մի փոքր քառանկյունի սենյակ է, արե-
վելյան գունագեղ գորգերով զարդարած:

Նա յերկու փոքրիկ լուսամուտների վարագույր-
ներն իջեցրել ե ու ինքը պառկել փափուկ թախթի
վրա: Նա ձեռքերը թափշա բարձիկների վրայից գրել
ե գլխի տակ, լիքը կուրճքը ցցել և ժպիտը շրթունք-
ներին, ծիծաղուն աչքերով ինձ և նայում:

Մի բոպեյի չափ նա այդպիս նայում ե ինձ, իսկ
յես լուս՝ կանգնել եմ դուռն տակը: *

—Յեկ,—ձեռքը գլխի տակից ազատելով ասում ե
նա:

Յես դարձյալ տեղիցս չեմ շարժվում:

Նա տեսնելով, վոր յես չեմ գնում, ինքն ե վեր
կենում և մոտենալով ինձ, կրակոտ կերպով սեղմում
ե կրծքին ու համբուրում...

Նրա ջերմ համբյուրների տակ յես ավելի յեմ
կուչ գալիս ու սեղմվում:

Հետո նա իմ թեից բռնած մոտեցնում ե կանաչ
թափշով ծածկված փափուկ թախթին ու ինքը կըր-
կին պառկում ե նրա վրա: Նա զույգ ձեռներիցս
բռնած ձգում ե իրեն, բայց հենց այդ նույն ժամա-
նակ զուռը շրիկալով բացվում ե ու չուծ աչքերով
այնտեղ կանգնում ե Սուրիս հանըմը...

9. ՄԻ ՃԻՉ ՈՒ ՄԻ ՓԱՅՏ

Զգիտեմ ինչպես, իսկույն այնտեղից յես դուրս եմ
պրծնում և ուղիղ գեղի արտ:

Ամբողջ որը հարբածի նման գլուխս պտույտ ե
գալիս ու չեմ իմանում, թե յես ուր եմ:

Յեվ յերկոյան, յերը բոլորից ուշ վերադառնալով
գոմն եմ մտնում, բոլոր տղաներն ել այնտեղ սովորա-
կանի պես զրուցում են:

—Հայ, ելի նապաստակ վորսալու եյիր գնացել
վոր եսքան ուշ ես գալիս: Քեզ սպասելով քաղցած
մեռանք, —ասում ե նրանցից մեկն ու Նազիմը լուս,
վուրքի յե կանգնում, գնում ե հացը բերելու:

Սակայն նա վոտը գեռ գոնից դուրս չդրած, բա-
կից լսվում ե մի սուր ձիչ ու լոռություն...

Մենք բոլորս նարսափում ենք ու նստում տեղնե-
րումս:

Նազիմը վիզը յերկարացնելով դուրս ե նայում ու
հետ գալիս:

—Սաքինեն եր, նա ընկավ...

Իսկ քիչ հետո, այլայլված, մի հաստ փայտ ձեռ-
քին, դողդողալով գոմն ե մտնում Հաջին:

—Ո՞ւր ե են լակոտը:

Յես սարսափից կուչ եմ գալիս:

Նա տեսնում ե ինձ ու ձեռքով անում:

—Մի գեսը յեկ:

Յես տեղիցս չեմ շարժվում: Նա չուած աչքերով
մոտենում ե ինձ, ատամները սեղմում ու նրա փայտի
ծանր հարվածն իջնում ե ուսիս: Սակայն հարվածը
յերկրորդ անգամ չի կրկնվում: Նազիմն իսկույն բըռ-
նում ե նրան և յես արագությամբ գոմից դուրս եմ
զագում:

Այն ամբողջ գիշեր վագեվազ գալով, լուսաղեմին
միայն յես հասնում եմ մեր գյուղը:

10. ՎԵՐՁԻՆ ԼԻԲԻԲՈԿԱՆ ԳԼՈՒԽ

Վերջին ժամանակներս, յերբ պրոլետարական այս
մեծ քաղաքում յես գնում եմ թուրք կանանց ակում-
բը, ուրախ դեմքով դիտում եմ չարսավը շպրտած կա-
նանց ու յերբմն ել նրանցից մեկի կամ մյուսի հե-
տեւկից յերկար նայելով ասում եմ.

—Սրբյաք Սաքինեն չի սա...

Միթե նրա սեորակ աչքերն ընդմիշտ չարսավի
տակ պետք ե մնային, միթե այն նրա վերջին ճիշն
եր, վոր յես լսեցի...

1931 թ.

Ա Ռ Ե Վ Լ

1

Գարնան հորդ անձրևներից հետո, արեն այստեղ ավելի տաք և լինում: Անձրել լիզում և ծառերի տերեխները և նրանք պապղում են արենի շողերի տակ:

Տաքից սևացած մի ամրակազմ տղա, վոր նոր և յեկել այստեղ, ինձ պատմում ե, վոր իրենց մոտ անձրեվից հետո տերեները չեն փայլում:

Յերբ գարնան հորդ անձրևներն այնտեղ ել են լիզում լայն փողոցների հատ ու կենտ ակացիաների չեչոտ տերեները, նրանք իրենց գլուխներն ավելի յեն կոացնում ու տիուր նայում գետնին:

Այնտեղ բարձր-բարձր շենքերի տանիքներից անձրեվաջուրը հորդաններից թափիում ե, միանում մայթերից հոսող պղտոր ջրերին և արագավազ մի վտակ կազմելով, շտապում ե զեպի լայն ու հսկա ծովը...
Ծովը կարոտանքով գրկում ե այդ ջրերին:

Այդ նույն ժամանակ, քաղաքից դուրս, տափակ ու յերկար շենքի գլխին մաղում է բարակ անձրել, իսկ ներսում - յեռում՝ կյանքն ու աշխատանքը:

Այնտեղ - ներսում, հորդաններից թափիող անձրեվաջրի նման հոսում ե շիկացած չուզունի հալոցքը և հոխորդալով լցվում տակը դրած դույլերի մեջ:

Յերոշկան կոանում ե, ծանրությամբ վերցնում հալոցքով լիքը դույլերն ու լցնում քառակուսի կաղապարների մեջ:

Շիկացած հեղուկն այնտեղ նախ կապտում ե, հետո սկանում և սառչում:

Յերոշկան թրդնում և կաղապարները, վերցնում յերկաթե յերկար ունելիքն ու մոտեցնում քուրայի վրա վառվող խողովակին: Ունելիքի ծայրում պտըտվում ե խողովակն ու բոցավառվում:

Այդ բարձր ջերմությունից նրա ճակատին դուրս են գալիս քրտինքի հատ-հատ շողշողուն կաթիլներ, պըսպղում քուրայում պարող բոցերի լույսի տակ, ապա դորվում են ցած, խառնվում հողին:

Հաղիկ քսանյերեք տարեկան և Յերոշկան, տաքից սևացած ու ամրակազմ: Զլուտ մկանները նրա թեվավոր կրծքակալի տակ ամեն մի շարժումից ուռչում են և ասես ուզում են դուրս փախչել փականքից:

Հետո Յերոշկան ունելիքով դուրս և տանում խողվակը և գնում ե կողքի ցեխից նորը բերելու: Ֆենյան այնտեղ և աշխատում: Նա թեները բաց, կապույտ բլուզ և հագնում, նրա մազերը կարճ են կտրած ու զիլին կարմիր թաշկինակ կա: Յերոշկան թեթև խըփում և ֆենյայի ուսին:

—Ելի թեկդ տակը քամով լցվեց —կեղծ բարկությամբ ասում ե ֆենյան ու նայում նրան:

— Դե լավ, դե լավ, ֆենյուշա, մի բարկանա. յես գնացի:

Յերոշկան վերցնում ե նոր պատրաստած խողովակներն ու վերադանում:

Ֆենյան կոանում ե «ցենտրոբեժի» վրա, լցնում նրա շշածկ խողովակը սկ հողով և մանկան նման թոշկոտում:

Մի տարի յե, վոր միասին են աշխատում:
 Յերբ աշխատանքը վերջանցնում են, յերեկոները
 ժողովից կամ ակումբից միասին են դուրս գալիս:
 Փողոցում նա աղջկա թեն առնում ե իր թեփ տակ
 և սեղմում իրեն:
 — Ուժի մի փորձի, ցավացրիր թես:
 — Մըցման ենք դուրս յեկել, կարող ես դու ել ցա-
 վացրու:
 — Գործարանում, սոցմրցման ժամանակ, հույս մի
 ունինա, վոր ինձ կհաղթես, բայց այստեղ՝ չգիտեմ:
 — Շատ ինքնավստահն ես յերեռում, բայց դեռ կը
 տեսնենք:
 Լայն փողոցներով խիտ, իրար հրելով անցնում են
 մարդիկ և նրանց վողողում ե ելեկտրական լույսը:
 Նրանք դուրս գալով փողոց՝ լուծվում են շրջող
 մարդկանց բազմության մեջ: Հետո հոգնած, յերբ նը-
 րոնք վերադառնում են դեպի տուն, Յերոշկան ճանա-
 պարին ասում ե:
 — Ֆենույշա, շատ եմ սիրում...
 — Քեֆիս չե՞, կուզեմ՝ քեզ չեմ սիրի...
 Բարձր սյունից նայող ելեկտրական փայլուն ճրա-
 զը կարծես ծիծալում ե:

* * *

Յեւ առավոտյան կրկին յեռում ե սովորական աշ-
 խատանքն ու վառարանից հոսում ե չուզունե հեղուկը:
 Յերոշկայի ճակատից քրտինքի մի կաթիլ կրկին
 դուրս ե գալիս, հանգարտությամբ դրովելով ընկնում
 կը քրծին ամրացրած նշանի վրա:

Բուրգաձե այդ նշանի հիմքից դուրս են գալիս բո-
 յերի յերեք լեզվակներ ու վեր բարձրանալով՝ կարծես
 ժպառում են Յերոշկային: Լեզվակների տակից կոր գծով
 անցնում են տառերն ու ընդգրիկում ամբողջ նշանը:

Յերոշկան անփութությամբ սրբում ե ճակատի

քրտինքն ու կունում կաղապարի վրա:
 Այդ ժամանակ նրա կողքով անցնում ե Սաշա
 Բլուզնիկովը: Նա գնում ե այն ցեխը, վորտեղ ֆեն-
 յան ե:

Բարձրահասակ, մոտ քսանհինգ տարեկան, բայց
 դեզնած դեմքով մի տղա յե՝ գործարանի գրասենյա-
 կային աշխատողներից: Հաճախ նա գալիս ե այդտե-
 ղով անցնում, ընդմիջումներին գնում ֆենյայի հւտ
 մի քիչ խոսում և վերադառնում:

— Ֆենյա, Ֆենյուշ, Սաշիկդ յեկավ, — նրա հետե-
 լից ասում ե Յերոշկան ու զարցյալ կունում ե կա-
 զապարի վրա:

Նրան վոչ ֆենյան ե լոսում և վոչ ել Սաշա Բլուզ-
 նիկովը: Սյուտեղ անընդհատ պտտվում են ցենտրոբե-
 ժերն ու անվերջ չկչկում:

Սաշա Բլուզնիկովը կանգնում ե Ֆենյայի դեմ ու
 դեմ, մի պահ հմայված նայում նրա ցիխոտված մատ-
 ներին, նայում նրա կարմիր և առողջ այտերին, սեսկ
 աչքերին և ասում:

— Այս աշխատանքը ձեզ բոլորովին չի սազում,
 Ֆենյա:

— Իսկ բուլկի ուտել կսաղի՝ ծիծալով հարցնում
 ե Ֆենյան:

— Ե՞հ, դուք կատակ եք անում, իսկ յես ամենայն
 լրջությամբ եմ ասում:

— Բա լավ, իսկ ինչո՞ւ չի այս աշխատանքն ինձ
 սազում:

— Զգիտեմ, բայց ինձ այդպես ե թվում։
— Ի՞նչ կարող եմ ասել, ձեր կարծիքն ե, — լրջա-
ցած՝ ասում ե Ֆենյան և շարունակում ե հող լցնել
ցենտրոբեժի մեջ։

3

Այստեղ յերեկոները ջինջ են լինում ու զով։ Գոր-
ծարանից ներքեւ լայն փողոցն ե ձգվում։ Նիհար ակա-
ցիաները բարձրանում են փողոցի յերկու կողմերից։

Սաշա Բլուզնիկովը աշխատանքից դուրս գալուն
պես լվացվում ե, շորերը փոխում, իսկ յերեկոյան,
յերբ աստղերը փոփում են նիհար ակացիաների գըլ-
խին, նա փողոց ե դուրս գալիս, նայում ե յերկնքում
ցրված աստղերին, բերնի ծուխը բաց թողնում և
խորը շնչում։

Այդպես նա հաճախ մենակ շրջում ե այդ փողոցում
և նայում աստղերին։

Յերբ նա տեսնում ե Ֆենյային անցնելիս, խորը
դլուխ ե տալիս և ասում։

— Վողջագուրանք, Ֆենյուշկա. . .

Ֆենյան ուրախ ծիծաղում ե և աւանց պատասխա-
նելու հեռանում։

Նա դարձյալ այդպես եր վարվել, յերբ Սաշա Բլուզ-
նիկովը մի անգամ նրան ասել եր.

— Ֆենյա, Ֆենյուշկա, յես ձեղ այնքան, այնքան
եմ սիրում, վոր. . .

— Ոյ, ոյ, ոյ — ծիծաղելով ձեռքը թափահարել եր
Ֆենյան և շտապ հեռացել։ Իսկ գիշերը նա յերկար
մտածելուց հետո յեկել եր այն յեղրակացության, վոր
Սաշա Բլուզնիկովը համենայն գեպս վաս տղա չե։

— Ֆենյա, Ֆենյուշկա, կանգնիր, — թեից բռնելով
այդ որը ասում ե Սաշա Բլուզնիկովը։

— Այդ դու յէս — ասում ե Ֆենյան և նրանք շրջում
են լայն փողոցի ծառերի տակով։

Նրանք լուս են և սպասողական դրության մեջ։

Սաշան ուզում ե խոսել, բայց գտնում ե, վոր այդ-
պես լուս շրջելն ել վատ չե։

— Ախ, այն ով և ասել, վոր «յերբ սրտերն են խո-
սում, լեզուները պետք ե լուն», — մտածում ե Սաշան
և նրանք քայլում են։

— Ֆենյա, ֆենյուշա, միթե ինձ չես խղճալու, — հան-
կարծ ասում ե Սաշան՝ առանց գլուխը բարձրացնե-
լու — յես չգիտեմ, թե ինչպես եմ սիրում քեզ. . .

Ֆենյան լրջությամբ նայում ե նրան և չգիտե ինչ
պատասխանել։

— Ֆենյուշա, յես կիսելագարվեմ, յես ինձ կորցրել
եմ. ինչ հրամայես, այն ել կանեմ — և ինքարերաբար
քնքույշ խոսքերը դուրս են թռչում նրա բերանից։

— Դե ի՞նչ ես վոգնորվել — ասում ե Ֆենյան՝ հան-
կարծ նրա ձեռքը բռնելով, — միթե չես կարող մի ու-
րիշն ճարել։

— Ֆեն, ֆենյուշկա, ախր յես միայն քեզ եմ սիրում. . .

Հետո լուսությամբ քալլում են նրանք, իսկ նրանց
գլխակերեռում աստղերն են անհամբերությամբ դողդո-
ղում։

— Իսկ Յերոշկային ի՞նչ անենք — և մտածկոտ, և
ծիծաղելով ասում ե Ֆենյան։

Սաշան իսկույն խլում ե նրա ձեռքն ու թափով
դրկում նրա փափուկ իրանց։ Ֆենյան թեթև հրում ե,
փախչում մի կողմ Սաշան սթափվում ե և նայում
նրա հետեւից։

Մի աստղ հիասթափվելով, սուզվում ե կապույտ
յերկնակամարում՝ յետեկց յերկար գիծ թողնելով։

Իսկ ֆենյան, յերբ փափուկ վերմակը քաշում ե
զլիսին, մտածում ե և Յերոշկայի, և Սաշայի և հիաս-
թափված աստղերի սասին:

4

Բոլորն ել ավրալի յեն գնացել:

Առավոտյան արեկի պայծառ շողերն ընկել են բար-
ձըր պատի վրա կանգնած Յերոշկայի միջքին:

Սյդտեղ են գործարանի ծառայողներն ու բանվոր-
ները, վորոնք միացած ուրիշ տեղից յեկաների հետ՝
յեռանդով աշխատում են:

Նրանք յեկել են յեղարաբար ոգնելու նրանց,
ովքեր գժվարացել են պլանները կատարելու:

Ներքելում աշխատանքը յեռում է:

—Տնւր, քարը տուր, —վերեից պահանջում ե Յե-
րոշկան:

Մեկը ծանր քարը մեկնում ե նրան:

Յերոշկան կանում ե բռնելու: Քարը նրան ձգում ե
և նա յերկրորդ հարկի պատի զլիսից վլորվում ե ցած:

Մի պահ աշխատանքը կանգնում է:

—Յերոշկան եր—լուս ե ֆենյան...

Նա տեսնում ե միայն նրա մեկնած վոտներն ու
արյունոտված վեմքը:

Հետո ավտոն տանում ե նրան, իսկ աշխատանքը
շարունակվում է:

Յերեկոյան դեմ, յերբ բոլորն ել պատրաստվում են
գնալու, Սաշա Բլուզնիկովը մոտենում ե ֆենյային:

Նա զլուսը կախել է ու պատի տակ տիրուր կանգնել:

—Ֆենյա, ֆենյուշա—կամաց շշնջում ե Սաշան.—

Կարելի յեղ քեզ մոտ գալ:

Ֆենյան հանկարծ շուռ ե զալիս և նայում Սաշա-
յին: Նրա աչքերում նկատվում են հաղիվ նշմարելի

արցունքներ: Ամբողջ դեմքը պատել ե գեղեցիկ ալ-

խլություն:

—Ֆենյուշկա, յես յեկել եմ...

—Թող—խստությամբ ասում ե ֆենյան: Նրա դեմ-
քը փոխվում ե և աչքերից արցունքներ են հոսում:

—Ֆենյա, ի՞նչու համար ես եղածիս, ի՞նչու...

—Ի՞նչ—ասում ե ֆենյան—ընկել ե...

—Յերոշկամն:

—Հեռացիր, ի՞նչ ես ուզում:

—Ֆենյա—ասում ե Սաշան՝ նրան մոտենալով:

—Հեռացիր, ասում եմ, դու ինձնից վոչինչ ել չես
ստանա, . . .

—Ֆենյուշկա, մի ասի, —աղերսում ե Սաշան:

—Հեռացիր, զգելի—տհաճությամբ ասում ե ֆեն-
յան ու հեռանում...

Ելեկորական գնացքը տնքում ե ներքենում: Բոլորն
ել շտապում են դեպի այնտեղ:

Ֆենյան միանում ե մյուսներին, իսկ Սաշա Բլուզ:
Նիկովը թույլ-թույլ քայլերով զնում ե նրա հետեւից:

5

Ամբողջ գիշերը ֆենյան ընել չի կարողանում:
Աչքերը փակում ե, վերմակը քաշում զլիսին, բայց
դարձյալ չի հաջողվում քնել: Նա անընդհատ շրջում
ե կողերի վրա և մտածում:

—Տեսնես ի՞նչ յեղավ... իսկ յեթե... մեռնի... . . .

Նա սկսում ե իրեն նախատել, վոր վորոշեց նրա
հետ չամուսնանալ, նա մոռացավ Յերոշկայի ուրախ և
աշխույժ բնավորությունը, նրա յեռանդն ու աշխա-
տասիրությունը, և վերջապես նրա առողջ կազմվածքն
ու ուժեղ մկանները... նա խոսք տվեց Սաշա Բլուզին:

31

կովին, վորը սովոր ե միայն աստղերի տակ յերդվե. լու:

Նա Սաշա Բլուզիկովին համեմատեց Յերոշկայի հետ և տեսավ, վոր Յերոշկան ամբողջ ցեխում ամենաառաջինն եր իր աշխատունակությամբ ու անսպառ յեռանդով: Ամբողջ ցեխում ով եր հասնում նրան: Նա յերբեք և վոչ մի անգամ աշխատանքից չի բացակայել:

Ի՞նչն եր պատճառը, վոր նա խոսք տվեց Սաշային. վոր նրանք գիշերները դուրս գան մութ ծառուղին և ունկնդրեն սրտների տրոփիունին: Վոչ, վոչ, նա — Ֆենյան միայն Յերոշկային և սիրում: Նրանից զատ ուրիշ վոչ վոր չի կարող նրա սիրտը գրավել:

— Ա՛խ, թող մի լավանա...

Այս, թող Յերոշկան լավանա, Ֆենյան կգնա նրա մոտ, ամեն ինչ կխոստովանի և կասի, վոր նրանից բացի ել վոչ վոքի չի սիրում:

... Յեկ ամբողջ գիշեր մտածում ե նա ու շըջում կողերի վրա:

Լուսագեմին քաղցր նինջը պատում ե Ֆենյային և նա զարթնում ե միայն այն ժամանակ, յերբ արեկ յերկար շողերը նայում են նրա պատուհանից ներս:

Նա իսկույն վեր և թոչում և դուրս վագում դեպի հիվանդանոց:

Այնտեղ ասում են, վոր Յերոշկան ամբողջ գիշեր սաստիկ տաքության և զառանցանքի մեջ ե յեղել:

Ֆենյան անհանգստությամբ մոտենում ե մահճակալին և սարսափահար կանգնում նրա գլխավերեկում: Նրա ամբողջ գեմքն ուռել ե և կապտել:

Յերեսի քերծված կաշին բարձրանալով ծածկել ե աչքերը: Նա միանդամայն այլանդակվել ու անճանաչելի յե դառնել:

Ֆենյան մի պահ այդպես զարհութանքով նայում ե նրան և հանկարծ ծայն ե տալիս:

— Յեր, Յերոշկա...

Նա չի խոսում և միայն խորը և դանդաղությամբ շնչում ե:

— Յերոշկա — կրկին կանչում ե նա և այս անգամ ել պատասխան չտանալսվ, նրա աչքերից սկսում են արցունքի կաթիները ներքեւ գլորվել:

Մոտենում ե նրան հերթապահ բժիշկն ու ասում:

— Մի անհանգստացեր, բան չկա. նա քնել ե...

Հետեւյալ որը ֆենյային հիվանդանոցից հեռախոսով պատասխանում են, վոր գրությունը համեմատաբար լավ ե: Խոկ գործից հետո, յերբ նա զարձյալ կանգնում ե մահճակալի վերնում, տեսնում ե Յերոշկայի բացված աչքերը, բայց չի խոսում:

Նա հանդարտությամբ շնչում ե և անթարթ աչքերով Ֆենյային նայում:

Ամէն որ առավտոները Ֆենյան հեռախոսով հարցնում ե Յերոշկայի մասին ու գործից հետո ինքն ե զալիս հիվանդանոց:

Մի որ ել, յերբ արեկ յերկար սյունը մեկնվում է հիվանդանոցի լայն միջանցքի յերկարությամբ, Յերոշկան դողդողալով վոտքի յե կանգնում և չուստերը սալահատակին քսմսելով սկսում ե շրջել:

Հանկարծ, ուրախ ժամփառ գեղքին, նրա առաջն ե դուրս գալիս Ֆենյան:

Յերոշկայի սիրտը թնդում ե ուրախությունից, և նա նստում ե մոտը դրած նեղ նստարանի վրա:

— Ո՞յ, արդեն վեր եմ կացել ուրախացած վազեցակ նրան մոտենալով ասում ե Ֆենյան:

— Դու սոցիալիստական մրցանակը տարաբ, վերջացրիր, յես դեռ վեր ել չկենամմ:

— Զե, մի անհանգստանա, սոցիալիստական մրցա-
նակը մենք յերկուսով միասին կտանենք:
Ֆենյայի սիրալ կարծես ինչ վոր ծանրությունից
ազտագում, թեթևանում և ուղում և տեղից դուրս գալ
ու թռչել:

Նա ժպտալով մոտենում և Յերշկային, նրա փառ-
թաթած գլուխը սեղմում կրծքին և նրանք համբուր-
վում են:

Իսկ արեի յերկար սյունը դողդողում և նրանց
գոտների տակ:

1931

ՏԱՏԻԿԸ

Այս տարի մեր դաշտերում բուրալից ծաղիկներ
կբուսնեն յեվ բերքառատ կլինի:

Այս տարի արտերում հասկերն ավելի ուռած կլի-
նեն, վորովհետեւ այս տարի ցերեկները՝ միշտ տե-
ղում են հորդ անձրևները, իսկ յերեկոները ջինջ յեր-
կնքից անձրևի նման կաթում են ուրախ աստղերը...

Այս տարի մի կին կմեռնի ու կտիրեցնի Եդիկին
ու Սեղիկին, վորովհետեւ նա պառավել եւ նրան դուր
չի գալիս գետերի հորդանալը, անձրևի գալը...

Անձրեի տակ փայլվիող յերաժշատական գործիք-
ները կնվան և Եդիկն ու Սեղիկը կկոցած աչքերով
ճամբու կդնեն տատիկի դագաղը: Նրանք լաց կլինեն,
վորովհետեւ ել տատիկ չի լինի, վոր նրանց համար
այնքան տարորինակ հեքյաթներ պատմի:

Իսկ հաջորդ առավոտյան, յերբ արեկ ճառագայթ-
ները բակում կհուրհուրան, Եդիկն ու Սեղիկն ել
կմիանան նրանց հետ և «Տելեֆոն» կխաղան:

— Սեղիկ, ծպլմնըտը—նրանից մի քանի քայլ հեռու
կանգնած, բարակ թելի ծայրին ամրացված լուցկու
տուփն ականջին դնելով՝ կասի Եդիկը:

— Ծպլմնըտը—կպատասխանի Սեղիկն ու Ժպտուն
աչքերով յեղբորը կնայի:

Այդ ժամանակ մի ուրիշ յերեխա վազեվազ կդա
նրանց մոտ և ուշադրությամբ նրանց նայելով
կհարցնի.

—Եղ ինչ եք խաղում:

—Տելեֆոն ենք խաղում:

—Իսկ ինչ բան և ծալմնը տը:

—Եղ ժաման ա տելեֆոնով ոռուսերեն Թոմաս Քե-
ռու հետ խոսում:

Այնուհետև նրանք իրենց խաղը կշարունակեն
միասին, արեվը կտաքացնի մեջքները և քրաինքը
կհոսի փոշեթաթօսին ճակատներից:

Յերեկոյան, յերբ աստղերը կսկսեն դողդողալ յեր-
կնքում, մայրիկը պատշտամբ դուրս կդա ու յերեխա-
ներին կկանչի.

—Եղիկ, Սեղիկ, քնելու ժամանակն ե, տուն յեկիք:

Ընթրիքից հետո մայրիկը կհանգցնի ելեկտրա-
կան լույսն ու բարակ վերմակը քնքշությամբ
կքաշի նրանց վրա:

Հետո, յերբ իրենք ել կպառկեն քնելու, Եղիկի հայ-
ը վրունիքը յերկարացնելով անկողնում՝ կհարցնի.

—Անսա, ի՞նչ ելինելու յերեխաների դրությունը:

—Զգիտեմ իսկապես, քանի մայրիկը կար, ելի լավ
եր, Այսուհետև ո՞ւմ մոտ պետք ե մնան, չգիտեմ...

Հետո վեմակը կթագցնի նրանց խոսակցությունը
և սենյակում կտիրի անթափանցելի խավարն ու լուռ-
թյունը:

Այդ ժամանակ լուռ, դանդաղ քայլերով «ներս
կմտնի» տատիկն ու Եղիկին իր դողը կառնի: Նա
կարոտանքով կհամբուրի Եղիկի այտերն ու կասի.

—Շատ, շատ եյի կարոտել քեզ, Եղիկ...

—Բա ո՞ւր եյիր գնացել:

—Տարել եյին, Եղիկ, քաջքերը, դեվերը...

—Իսկ քեզ չարչարեցին:

—Շատ, շատ տանջեցին ինձ, Եղիկ: Նրանք գամել
եյին ինձ այուսից և վառներիս տակը կրակ գրել: Մե-
կը քաշը շում եր մազերիցս, իսկ մյուսները՝ հոհում
եյին: «Դու անսատված ես, դու չես հավատում» ասում
եյին նրանք: «Մենք քեզ այսպես պետք ե խորովենք:
Մարմինդ մեր ու շներին կտանք, իսկ հոգին՝ կուպրի
կարսում կդնենք»...

—Տատ, տատիկ ջան, իսկ դու լաց չեյիր լինում:

—Նրանք զրանից ավելի եյին կատաղում: «Դու
պետք ե այնտեղ լաց լինեյիր և ասսուն չմոռանայիր»
ասում եյին նրանք...

Եղիկը վախինալուց կսեղմվի տատիկին, իսկ նա
վոտքի կանանցի:

—Եղ ուր, տատիկ, յես վախենում եմ...

—Յես գնում եմ, Եղիկ, յես գնում եմ...

—Վայ, չար դեերը, տատիկ, չար դեերը, յես վախե-
նում եմ. դու մի գնա...

—Զե, Եղիկ...

—Վայ...

—Եղիկ, Եղիկ, ինչու յես լաց լինում — զարթնելով
իսկույն կհարցնի մայրը:

—Վայ, դեվերը, մամ, դեերը...

—Դև չկա, բալիկ ջան, դև չկա: Մի վախեցիր...

—Զե, յես վախենում եմ, հւր գնաց տատիկը, յես
վախենում եմ...

—Բնիր, Եղիկ ջան, մի վախեցիր:

Կա թնանա հայրիկն ել ու Եղիկին նրանք իրենց
մոտ կառնեն: Յերբ Եղիկին նրանք կդնեն իրենց
արանքում, հայրը կասի.

— Պառավը վաս ե սովորեցրել յերեխաներին:

— Ի՞նչ պետք ե անել, չգիտեմ...

— Պառավը...

Յեվ վերմակը կրկին նրանց վրա կքաշվի:

Այս տարի մեր գաշտերում բուրալից ծաղիկներ
կրուսնեն, հասկերն ավելի ուռած կլինեն և մի պառավ
կմեռնի, վորովհետև նրան դուք չի գալիս գետերի
հորդանալը, անձրկի գալը...

1931

Ich liebe Dich

սիրով՝ ԼիԶԱՅԻՆ

— Կարող ե պատահե՞ւ, վոր դուք փողոցով անցնե
լիս՝ լսեք Ich liebe Dich և այդ բառերի իմաստը չհաս-
կանալով շարունակեք ձեր ճանապարհը: Մի քանի
քայլ չանցած, ձեր յետերից յեկողները շարունակեն.

— Այս, նշանակում ե յես սիրում եմ քեզ:
Այս անգամ արդեն դուք յետ նայեք, տեսնեք ձեր յե-
տեից խոսելով գալիս են յերկու գեղեցիկ աղջիկ:
Նրանք բարձրահասակ են, սևաչյա ու թխամազ: Դեր-
մաներն այդ բառերը դպրոցում նոր են սովորել,
կրկնում են, վոր մաքներումն ամրանա: Իսկ դուք
յերիտասարդ եք և ձեր յերակներում պատվում ե կար-
միր արյունը:

— Ո՞ւմ, այդ ինձ եք սիրում, — իսկույն յետ դառ-
նալով ասեք դուք և ժպտալով նայեք նրանց: Նրանք
ձեր խոսքերից ամաչելով գլուխներ կախեն և թեք-
վելով իրար ականջի փոփսան:

Ոգտվելով այն հանգամանքից, վոր նրանք լուս
ընդունում են ձեր կատակը, դուք ավելի վողեվորված
շարունակեք.

— Իսկ գմբահղից գիտեք, վոր յես ել ձեզ եմ սի-
րում:

— Մենք այդ ձեզ չեյինք ասում, — կամաց շշնջա
նրանցից մեկը:

— Ի՞նչ կլինի, վոր հենց ինձ ասեք:

Յեկ այսպիս դուք ծանոթանաք ու աշխույժ, զրուցելով անցնեք ամբողջ փողոցը: Կարող ե պատահել, վոր բաժանվելիս նայեք իրար, դարձալ ժպատաք ու քնքույշ «ցտհսությունը» անջատվեք: Իսկ յերբ ֆարգործուսի դարպասով անցնելիս լինեք, մտքներումդ կրկնեք նրանցից լսած խոսքեն ու մտնեք արհեստանոց:

Հետո արհեստանցում անընդհատ պտտվի մեքենան ու նրա հանած ձայնը ձեզ թվա, թե ասում ե.

— Ich liebe Dich, ich liebe Dich...

Ապա յերբ սուլիչը սուլի, աշխատանքի ժամը լրանա, դուք դուրս գաք փողոց, տեսնեք Աստղիկին կապույտ բլուզի թերթը ծալած գեպի տուն զնալիս և չմոտենաք նրան:

Կարող ե պատահել:

Որինակ յես այդ որը մենակ տուն զնացի:

Յեթե ամեն որ Աստղիկի հետ տուն զնալն ինձ համար սովորություն եր դարձել ու հաճելի յեր, յեթե նրա հետ մեր խոսակցության նյութն անսպառ եր, այդ որը չեյի ուզում հանդիպել նրան ու խոսել հետք:

Սյդ որն իմ ուղեղում պատվում եր միայն այն աղջկն ու նրանցից լսած բառերը:

Մի որ, յերբ յես թատրոնում կրկին հանդիպեցի այդ աղջկան, ուզեցի զլուխս կախ անցնել, բայց իսկույն նկատեցի ինձ վրա հառած նրա սկսե աշքերը:

Յես մոտեցա նրան ու ասացի.

— Ich liebe Dich...

Նա ժպտաց և կարծես թե ամաչելուց նայեց չորս կողմու:

Յես հարցրեցի նրա անունը:

— Ոֆելիա, — իսկույն ասաց նա և մենք խառնվեք յինք դահիճում զբունովներին:

Ներկայացումը վերջանալուց հետո նա ինձ ասաց.

— Թույլ ե, ապրումներ չկան...

Յես զարմացա, վոր նա վոչինչ չասաց այն բանվորների մասին, վորնք վզգերված աշխատում եյին բարձրացնել իրենց աշխատանքի տեմպերը, կատարելու ու գերակատարելու սոցմըցման պայմանագրում նշված կետերը:

Յես զարմացա, վոր նա վոչինչ չասաց այն բանվորի մասին, վորն աշխատանքի ամենայեռուն ժամանակ թողնում ու սառը ջրի տակ ե մտնում. նա վոչինչ չասաց նաև այն կոմյերիտականի մասին, վորը ծխախոտը բերանում՝ անդադար շրջում եր ժամացույցի տակով՝ տեսնելու, թե յերբ ե լրանալու դադարի ժամանակը: Այս բոլորի մասին նա ինձ վոչինչ չասաց ու մենք յերկար լրեցինք:

Այդ ժամանակ յես իսկույն հիշեցի Աստղիկին. այն աղջկան, վորի հետ մենք այնքան աշխատել ենք ու յերկար զրուցիլ:

Յեթե նա ինձ մոտ լիներ, կվիճեր ինձ հետ, ժամացույցի տակով զբունովին կհամեմատեր մեր Արմիկի հետ ու մենք չեյինք լոի:

Յես այդ ժամանակ մեծ կարոտով հիշեցի Աստղիկին ու ցանկացա, վոր նա ինձ մոտ լինի...

— Իսկ կարող ե պատահել, վոր դուք Ոֆելիային թատրոնից ճամբու զցելուց հետո մտնեք անկողին ու յերկմբ, — շատ յերկար մտածեք նրա և Աստղիկի մասին, նրանց համեմատեք իրար հետ, իսկ առավոտ.

յան, յերք արհեստանոց եք ուզում մտնել, լուանը
հանդիպեք Աստղիկին ժպտալիս, ուրախ-ուրախ մոտե-
նաք նրան, մի պահ լուռ նայեք նրան և ձեռներդ
դնելով ուսին՝ ասեք.

Աստղիկ, Ich liebe Dich.....

Նա ձեզ չհասկանա, դուք նրան բացատրեք և թե-
փեց հուպ տալով մտնեք արհեստանոց:
Կարո՞ղ ե պատահել...

1931

ՄԻ ՓՈՒԽՆՁ ԾԱՂԻԿ

Ընկերոջս Գրաւուն

1

Մայրը կանգնել եր ճանապարհից քիչ դուրս, աչ-
քերը արեվիթ շեղակի ճառագայթներից պաշտպանելու
համար՝ ձեռքը զրել եր ճակատին և նայում եր զեպի
ստվերապատ ճանապարհը, վորտեղից պետք ե զար
նա:

Բարձր բուրների թանձր ստվերն իջել եր ճանա-
պարհի վրա յեվ արեվկա կողմից այնտեղ նայողին
վոչինչ չեր յերեվում: Մայրը լարել եր իր ամբողջ
ուշադրությունը, բայց այնտեղից վոչ մի ձայն չեր
լսվում: Նա յերկար նայելուց հետո սկսեց կասկածել.

— Զլինի, թե Աղամսիկը ստել ե...

Այդ մտքից նրա վուները թուլացան, քիչ մնաց
նստեր տեղում, բայց նույն ժամանակ ստվերապատ
ճանապարհից ձայներ լսեցին: Նա անմիջապես լարեց
իր ուշադրությունը ձայները լավ լսելու համար: Բայց
այդ ձայները նրան ծանոթ եյին. այդ իրենց գյուղա-
ցիներն եյին վերագառնում ներքեվի ալգիներից՝ որ-
պա աշխատանքներից հետո:

Մարինոս բիբին կրկին հույսը կորցրեց. ուզեց
վերագառնալ, բայց նույն ժամանակ իր հետեւից լըս-
վեց իրենց հարեվան Հայկաղի ձայնը:

— Վայ, Մարինոս բիբի, մուշտուլուղո... .

Մարինոս բիբին ել վոշինչ չկարողացավ խոսել՝ Նրա սիրտն իսկույն ուժգնորեն թնդաց, ձեռներն ինքնաբերաբար իշան ծնկներին և նա կարողացավ միայն բացականչել.

— Յանի զմբիթ, Հայկազ Ջան, յես քո հոգուն մարտադ...

Հետո նա ել միջոց չունեցավ նայելու իրեն փաթաթվողի զեմքին. նա միայն ամուր զրկեց նրան և զլուխը սեղմեց շրթունքներին:

Եհկողը Մարինոս բիբու վորդին եր: Ուղիղ տասը տարի մայրը նրան չեր տեսել. Մի ամիս առաջ տղարյից նամակ եր ստացել, վոր ամառն իրենց մոտ ե գալու, իսկ թե վոր որը, այդ չեր զրել: Մարինոս բիբին սրտատրոփ սպասում եր տղային: Իր վորդու գալու մասին նա գյուղում բոլորին ել հայտնել եր:

Գյուղում շատերն եյին մեծ հետաքրքրությամբ սպասում Բագրատի զալուն: Նրա յերկար բացակայությունից հետո ուղում եյին տեսնել, թե ինչպիսի մարդ ե դառել նաև ճիշտ ե, մինչեվ Բագրատի զալը գյուղում հաճախ եյին նրա մասին խոսում: Նրան տեսնողները պատմում եյին, վոր հասունացել, խելոք տղայե դառել, անուն ե հանել: Իսկ նրանք, ովքեր չեյին տեսնել, ուղում եյին տեսնել, իրենց լաածներն անձամբ ստուգել:

Այդ որը Աղավանիկը ներքեվի այգիներից տուն գալիս ճանապարհին տեսել եր, վոր մի անձանոթ մարդ, ճամպրուկը շալակին, մենակ գեղի գյուղն ե զնում, ինքը մոտեցել եր նրան, հարցրել և իմանալով, վոր Մարինոս բիբու տղան ե, վաղե վագ յեկել եր մորը հայտնելու ուրախ լուրը, իսկ Բագրատը միանալով աշխա-

տանքից վերագարձող մյուս գյուղացիներին՝ նրանց հետ զրուցելով գուղ եր յեկել:

Մարինոս բիբին իր վորդուն յերկար ժամանակ գրկեց բաց չեր թողնում:

— Բոլ հերիք ա, Մարինոս բիբի. — քիչ հետո ասաց Հայկազը — մի քիչ ել թող ու ըիշների համար:

— Զե, հրեն հսքան վախտ ուրիշներին ա յել ել. անջախ ա ձես ընկել, հմի յել իմս պետք ա լինի: Տասը տարի Մարինոս բիբու պոոշները կարոտից չորցել ձաքձքուել են, թող մի կարոտս առնեմ ե...

Մինչև տուն համելը, ճանապարհին նրանց միացան ելի նորանոր գյուղացիներ, վորոնցից շատերին Բագրատը ճանաչում եր: Չնայած տասը տարվա բացակայությանը, նա այնուամենայնիվ նրանց չեր մոռացել: Նա սերտ նամակագրություն ուներ իր համազյուղացիներից, հասակակից ընկերներից շատերի հետ: Այդ նամակագրությունների ընթագրում այս կամ այն առիթով հաճախ եյին հիշում իրենց ծանոթ գյուղացիներին և զրա համար ել Բագրատը նրանց չեր մոռանում:

Տուն համելուն պոս իսկույն նրան շրջապատեցին հարեան հարեանուհիները: Բագրատանաշափ հարց ու փորձից հետո, նստած կանանցից մեկն ասաց,

— Աղջի, Մարինոս, հա մի տղիդ հոգսը քաշիր, ճամբա յա յեկել, մոված կլինի:

— Հա, մեռնեմ տղի բոյին — ասելով իսկույն վոտքի կանգնեց մայրը:

Մյուսները գնացին: Մարինոս բիբին շփոթվել եր: Զգիտեր ինչով հյուրասիրել վորդուն: Նա անընդհատ վազվագում եր մի տեղից մյուսը, մի անկյունից մի ուրիշը և միշտ ել գատարկաձեռը գալիս տղայի մոտ:

— Անունիդ մեռնեմ, ախր ի՞նչ բերեմ քեզ համար,
ի՞նչ ես ուզում...

— Ի՞նչ ես քեզ կորցրել, մայր—մոր շփոթությունը
տեսնելով՝ ծիծագելով ասաց վորդին:

Այդ ժամանակ դրսից վոտնաձայն լսվեց և մայրը
չկարողացավ վորդուն պատասխանել:

Յեկողը Բաղրատի հայրն եր:

Հայրն ավելի թույլ գտնվեց, քան թե մայրը: Նը-
րան գեռ զյուղը չմտած հայտնել եյին վորդու գալու
մասին և նա մինչև տուն հասել եր գլխիկոր: Նա
բակում տեսնելով վորդուն, անմիջապես ճանաչեց և
փաթաթվեց նրան: Վորդուն զրկած ժամանակ ել չը-
կարողացավ զսպել և արցունքի կաթիլները հանդարտ
գլորվեցին...

Մարինոս րիբին նկատելով ամուսնու արցունքնե-
րը՝ ձեռներն ողում բարձր բռնած, յերգելով մոտեցավ
նրանց.

Առուն արագ գալիս ա,
Ենպես արագ գալիս ա,

Մի մարդ ունեմ սարի պիս—
Մըտից բարակ՝ լալիս ա հյ, լալիս ա...

— Առարդ այ առարդ, ի՞նչ յերգելու վախտ ես ճա-
րել:

— Բա ի՞նչ, քեզ պես անխելք եմ, վոր ուրախանա-
լու տեղակ լաց լինեմ:

— Լավ, ել լավ, ճախարակիդ թելը կարճ կտրիր. դու
զնա ուտելու ձար տես:

— Ավելորդ բան ես ասում, այ հալիվոր, թե վոր
խոսելու բան ել չես ձարում, եղ ել ջոկ բան ա...

— Փյա, այ տա, եղ չո կարգին փիլիսոփ ես դառել
ու վարդապետի փեշերը ծալել:

Մարինոս րիբին ամուսնու վերջին խոսքերը չլսեց.
Նա արդեն գնացել եր տուն ուտելու բան պատրաս-
տելու: Իսկ իրենք՝ հայր ու վորդի, խոսելով բարձրա
ցան տան կտուրը, ուր ամառ ժամանակ սովորաբար
ընթրում եյին և գիշերները պառկում:

Այդ յերեկո, ընթրիքից հետո, նրանք շատ յերկար
նստեցին: Հավաքվել եյին բոլոր հարեվանները: Բա-
վականաչափ զրուցելուց հետո, յերբ նրանք գնացին,
այս անդամ ել հայրն սկսեց իր հարց ու փորձը: Նա
ամենից առաջ հարցրեց, թե քաղաքում ինչ գործի յե-
լինում իր տղան: Այդ մասին թեյեվ Բագրատը մի
քանի անդամ եր զրել վոր աշխատում և թերթի խըմ-
բագրատանը, վոր գրող ե, բայց հայրը զրանից շատ
բան չիր հասկացել:

— Ելի յես լավ չեմ հասկանում, թե փեշակդ ինչ ա-
ախը ամեն որ առավոտվանից մինչեվ իրիկուն ի՞նչ
գործ ես կատարում դու:

Բագրատի փոքրիկ յեղբայրը, վոր յերկար ժամա-
նակ լրու լսում եր, այդ ժամանակ մեջ ընկալ և
հորը բացատրեց, թե ինչ ե նշանակում զրող:

— Ին բանաստեղծ ա յելի, չես իմանում:

— Իմանում եմ ե, իմանում եմ, պանակեղծ ա, հա-
մա դե վորն ա դրա փեշակը...

Բագրատն ուզեց ինքը բացատրել, թե ինչով ե
զբաղվում, բայց յեղբայրը կրկին ընդհատեց նրան
և ինքը շարունակեց զրանով իսկ կամենալով ցույց
տալ, վոր ինքն արդեն գիտե, թե ինչով ե զբաղվում
իր յեղբայրը: Նա թվեց մի քանի հայտնի բանաստեղծ
ների անունները, կտորներ ասաց նրանց զրվածքնե-
րից: Ասաց, վոր մի բանաստեղծություն ել Բագ-
րից: Ասաց, վոր մի բանաստեղծություն ել Բագ-

բոցում կարդացել են, վերլուծել և իմանալով, վոր զրա գրողն իրենց զյուղացի յե, աշակերտների մեծամասնությունն անգիր սովորել եռ միշտ արտասահնում են:

—Ինչ կա վոր, վոչինչ չունեմ, ոկի վատ փեշակ չի, համա դե...

—Դե լավ, այ մարդ—տեսնելով, վոր ամուսինը միտք ունի դեռ շարունակելու, նրան ընդհատեց կինը —մի քիչ ել եզուց հարց ու փորձ կանես. եսոր արդեն բոլ ա. ճամբար յա յեկել չե, բեզմարած կլինի:

—Ասենք եղ մինը դուզ ես ասում համաձայնեց Ալեքսան ապերը—հարկավոր ա մի քիչ դիմջանալ. խոսելու վախտ հալա շատ կունենաք:

Դիշերը համարյա թե կիսվել եր: Մայրն արդեն բացել եր նրանց անկողինները:

Բազրատը յերբ մտավ անկողին, մայրը նստել եր կողքին: Նա չեր ուզում տղայի մոտից հեռանալ և բզմայլված իր գորդուն եր նայում: Նա տակավին փոխվել եր: Միանգամայն այն չեր, ինչ վոր մայրն եր պատկերացնում: Նա զյուղից գնալիս՝ լիքը, կար մրաթըշիկ տղա յեր, իսկ այժմ մեծացել ե, հասակով մարդ դառել, բայց ավելի յե բարակել ու քնքացել:

Դեռ Բագրատի բացակայության ժամանակ մայրը հաճախի մտքում պատկերացնում եր, վեր հիշում նրան զյուղից գնալիս և այլպիսի բոպեներին նա կենդանի կերպով իր աչքերի դեմ տեսնում եր Բագրատին: Վարդու ուզարկած բոլոր նկարներն ել ճիշտ այնպես եյին, ինչպես մայրն եր պատկերացնում մ, իսկ այժմ շատ քիչ նմանություն կա ներկա և մորը պատկերացրած Բագրատի միջեվ: Կարծես թե նրա ուզարկած նկարներն ել չեն նմանում: Նկարների և իրական Բագրատի նմանությունը միայն թուի-թուի,

գրավիչ տէքերն են, իսկ մնացածն ամբողջապես այլ մարդ ե.

Սակայն այդպես ավելի դուրեկան ե, նա այդպես ավելի լավն ե, քան մայրն եր պատկերացնում:

Յեվ մայրը յերկար ժամանակ, հիացած կերպով նայում եր իր վորդուն ու չեր կշտանում...

2

Գյուղում Բագրատի համար որերն այնքան ել նըկատելի չեյին անցնում: Նա սկզբում հաճախում եր իր բարեկամներին, գնում եր հարեվանների մոտ, ազատ ժամերին զրուցում հետները:

Բացի այդ, նա քաղաքից իր հետ մի շարք գրքեր եր բերել, գլխավորապես կարդում եր այդ գրքերը յեկ միաժամանակ ինքն ել եր գրում:

Ճերեկները, յերբ արեվը տաքանում եր, նա զընում եր այզի, նստում մի ծառի տակ, կամ գրում եր, կամ կարդում յեվ կամ ել վերամշակում քաղաքից բերած իր մի շարք անավարտ գրվածքները:

Այգուց քիչ ցածր—անցնում եր բաշակ ձորակը, վորը մի բարձր ջրվեժ ուներ: Ամեն որ, հենց վոր տաքն ընկնում եր, նա միշտ գնում եր ջրվեժի տակ լողանալու, իսկ յերբ արեվը թեքվում եր—կրկին վերադառնում եր տուն, մի քիչ հանգստանում, ապա՝ յերեկոները գրուղամեջ գուրս գալիս:

Գյուղում յեթե վորեկ ժողով եր լինում, անպայման մասնակցում եր այդ ժողովներին, իսկ յեթե ժողով ել չեր լինում, հանդիպում եր կոլտնտեսության նախագահին, կամ առանձին կոլտնտեսականների, հետները զրուցում, հարցնում որվա աշխատանքների մասին, ոգնում այս կամ այն ինդրութիւն:

Այդ որը, յերեկոյան, կոլտնտեսության գրասենյակի մոռոքն անցնելիս այնտեղից ձայները լսելով ներս զնաց: Ներսում թեպետ շատ մարդ չկար, բայց այնպիսի մի աղմուկ եր, վոր վոչ վոր չեր լսում, թե դիմացինն ինչ ե ասում:

Հենց վոր թագրատը մտավ այնտեղ, աղմուկը մի քիչ դադարեց: Բոլորն ել իրենց ձայները ցածրացրին:

— Յանի ընիլ չի, վոր մի քիչ յավաշ խոսեք — նրան տեսնելուն պես իսկույն տեղից բարձրանալով ասաց Դանիելը — ինչ եք ճղված զավալի պես դուռում:

— Շատ լավ կլինի, ընկեր Դանել, համա դու ամենից պինդ ես դուռում պատասխանեց Յեփրեմը — կոլտնտեսության նախագահը և կրկին խնդրեց, վոր հանդարտ խոսեն:

Այդ կոլտնտեսության վարչության նիստն եր — բրիգադիրների և ակտիվի հետ միասին: Քննության եյին առնում կոլտնտեսության մարտիների հարցը: Յեղած մարտիները չեյին բավականացնում, հարկավոր եր մի նոր մարագ յեկս կառուցել:

— Եղ հարցը պետք ա հետաձգենք — ասում եր կոլտնտեսության յերկրորդ բրիգադի բրիգադիր — Սահկը — մենք չենք կարող բերքը դաշտում թողնել և մարտի հարցը մեջտեղ զցել: Ճիշտ ա, մարտին ել ա հարկավոր, բայց ամենից առաջ մեղ պետք ա բերքը: Բերքահավաքից հետո նոր կարող ենք այդ հարցով զբաղվել:

— Սիալ ա, ընկեր նախագահ, մի ձայն տուր — տեղից բացականչում եր Սատղիկը — Սահակի կինը, վորը միաժամանակ յերրորդ բրիգադի բրիգադիրն եր:

— Վոչ մի սխալ չկա, ել դամմազալ մի զցի — տեղից պատասխանեց Սահակը յեկ դրա համար ել Սատ-

ղիկն առանց նախագահից թույլտվություն ստանաւ լու՝ սկսեց:

— Վոնց չի սխալ, մենք չենք կտրող դարմանը թողնել դրասում, անձրեթերի տակ փչանալիս, մինչև վորուց աշնանը մարագ կապրենք: Իսկ դարմանի հարցը ևս տարի մեղ մոտ վճռելու յա մեր անսառունների բախտը: Իմ կարծիքովս, ընկեր Յեփրեմ, եղ հարցը պետք ա մենք հենց հիմիկվանից լուծենք:

Յեվ այսպես վիճում եյին անընդհատ, մինչեվ վոր այդ մասին խոսեց նաև Բագրատը:

Բագրատին նրանք մեծ ուշադրությամբ եյին լսում: Մինչ այդ նա արգեն մի յերկու անգամ ժողովներում խոսացել եր և բոլորի համակրանքին արժանացել: Նա միանգամայն այն չեր, ինչ վոր սկզբից վոմանք եյին կարծում, թե.

— Ահա, քաղաքից ա յեկել և ուզում ա իրան մի ցույց տալ:

Տեսնելով, վորն նա միշտ ել կոնկրետ ե խոսում, ճիշտ և տեղին, դրա համար ել նրա խոսելու ընթացքում վոչ վոք ավելորդ շարժում չեր կատարում:

— Իմ կարծիքով — սկսեց Բագրատը — ճիշտ ե առաջարկում ընկերը...

Այդուղ նա մի պահ կանգ առավ: Նա նայեց Աստղիկի կողմը և նրանց աչքերը հանդիպեցին իրար:

Նրանք մանկության շատ մոտ ընկերներ եյին: Մինչև այդ, Բագրատը համարյա թե այդ հանգամանքը չեր հիշում: Նրանք յերկար տարիներ միասին են յեղել, մեծացել են մեկ տեղ, իրար դրկից: Այդիներն են պահել և աստղալից ջինջ յերեկոներն այգիներից միասին են վերադարձել Այս բոլորը հանկարծ ջրապառություն նման խոռը, անցան նրա հիջողությունից: Այդ ժամանակ նա մի պահ միայն իր մտքի թելը

կարծես թե կորցրեց, սակայն իմկույն ելի ուշքի գառ
լով՝ շարունակեց.

— Ընկեր Աստղիկը ճիշտ ե առաջարկում. մտրագի
կառուցումը չպետք ե հետաձգել: Կարող ե աշունը
շուտ վրա հասնել, կփչացնեք դարմանը, կերի պակա-
սություն կունենաք և անսասունները կկոտորվեն: Իմ
կարծիքով պետք ե վազվանից մի բրիգադ ամբողջա-
պես տրամադրեք մարագի կառուցման աշխատանքնե-
րին:

Բագրատից հետո ուրիշներն ել խոսեցին, իսկ վերջ
նական յեզրակացությունն ելի մնաց նույնը, վոր մա-
րագի կառուցումն սկսել հենց վազվանից:

Ժողովի վերջանալուց հետո շատերը դեռ խսում
եյին գրասենյակում: Աստղիկը չմնաց այդ խոսակցու-
թյանը: Ժողովը վերջանալուն պես նա դուրս յեկավ,
վոր գնա, իսի Բագրատը հետեւեց նրան:

Դրսում, գրասենյակից դեռ մի քանի քայլ չեռա-
ցած՝ կանչեց:

— Աստղիկ...

Աստղիկը կանգնեց, առանց նրան նայելու սպասեց,
թե ինչ պետք ե ասի: Բագրատը հավասարվելով նրան
ասաց:

— Ինչնեւ յես քեզ այդքան հեռու պահում...

— Ի՞նչ իմանամ. ասում եմ գուց ե մոռացած լինեք:

Բագրատին զարմացրեց նրա վերջին բառը: Ինչնեւ
դուքով ասաց: Մի քիչ լոելուց հետո հարցրեց.

— Միթե մանկությունը կմոռացվի...

— Միջավայրը կստիպի մոռանալու. չե վոր գուք
հիմի միանգամայն այլ միջավայրում եք գտնվում...

Նրա այդ նոր պատասխանը Բագրատին ավելի զար-
մացրեց: Նա չեր սպասում, վոր Աստղիկն իրեն այդ-
պիսի լուրջ պատասխան կտա: Նա Աստղիկը հեռացել

էր, յերբ նա դեռ մի միամիտ աղջիկ եր և Բագրատը
չեր սպասում, վոր նա այդքան փոխված կլինի:

— Աստղիկ, ինչնեւ յես ինձ հետ դուքով խոսում:

— Դե ի՞նչ կա վոր—քմծիծաղ տալով ասաց Աստղի-
կը—եղ ենքան ել կարևոր չի, յեթե ուզում ես՝ դու-
յով կիսուեմ:

Հետո Բագրատը յերկար ժամանակ վոչինչ չգտավ
նրա հետ խոսելու: Վորոշ տեղ լուր քայլելուց հետո
նա նոր միայն հարցրեց:

— Լավ, Աստղիկ, բա ի՞նչ ես անում, վմնց ես. գի-
տեմ, վոր արդեն ամուսնացել ես և դադարել ես մե-
րոնց հետ հարեւանություն անելուց, լսել եմ, վոր յե-
րեխա յել ունես. գոհ ես ընտանեական կյանքիցդ:

— Ե, լավ, ինչնեւ յես հենց սկզբից ընտանեականի
մասին հարցում:

— Միթե այդ անհարմար հարց ե: Եես, ճիշտն ա-
սած, ուզում եմ քո մասին լայն տեղեկություն ունե-
նալ և ուրիշ վոչինչ: Խնդրում եմ իմ հարցի մեջ վոչ
մի հետին միտք չփնտրես:

Աստղիկը ծիծողից և նրա հարցին սկզբից չպա-
տասխանեց: Արդեն հասել եյին իրենց տանը: Այդ ժա-
մանակ Սահակն ել յեկավ և միայն Բագրատից ան-
ջատվելիս Աստղիկն ասուց:

— Ե, Բագրատ, կյանք այ ապրում ենք ելի—ու նը-
րանք յերկուսով գնացին միասին, իսկ Բագրատը հետ
դառագ:

Բագրատը նրանց մոտից տուն գալուց հետո պառ
կել եր անկողնում և յերկար ժամանակ քունը չեր տա-
նում: Նա Աստղիկի մասին եր մտածում:

— Ինչպես և փոխվել այդ աղջիկը, չե վոր նա վե-
րին աստիճանի նայիվ, պարզամիտ մի աղջիկ եր: Այժմ
ինչ խելոք պատասխաններ ե տալիս:

Յեզ Բագրատը կրկին անդամ վերհիշեց Աստղիկի
հետ անցկացրած իրենց մանկությունը, յերբ միասին
լողանում եյին այդինքներից ցած ջրվեժի տակ, միասին
թիթեռնիկներ, ֆոսֆորի նման մթության մեջ լույս
տվող բգեղներ հավաքում և յերեկոնիրն այդուց վե-
րադառնալիս՝ աստղերն իրար մեջ բաժանելիս կավում,
մի քանի որով իրար հետ խռովում ու կրկին հաշտ-
վում...

Այն ժամանակ նրանք գեռ մանուկներ եյին, պար-
զամիտ մանուկներ. իսկ այժմ արդեն հասունացած
մարդիկ են Աստղիկը նույնիսկ յերեխա ունի: Նա բրի-
գագիր ե. նա այլևս այն նայիկ աղջիկը չե և գիտե,
թե վոր հարցին ինչպես պատասխանել. Աստղիկը...

Իսկ այդ ժամանակ քունը հանդարտ իշում եր
նրա աչքերին և իրար վրա ծանրանում եյին հոգնած
կոսկերը,

3

Այդ որն Աստղիկի բրիգադն աշխատում եր Բագ-
րատենց այգու դիմացի արտերում: Դրանք նախկին
վանական արտեր եյին—գյուղի ամենաբերրի հողա-
մասը, վորոնք այժմ կոլտնտեսության ձեռքին եյին:

Բրիգադի խուրձ կապողը, բավականաչափ աշխույժ
մի մարդ, վորի մի վոտի կազության համար գյու-
ղում կաղ Մացակ եյին անվանում, խուրձ կապելիս
յերգում եր—հանդարտ, զուրեկան ձայնով:

Այդ Բագրատի զրած գեղջկական բանաստեղծու-
թյուններից մեկն եր, վորը ձայնագրվել եր և զբան
յերգում եյին նաև իրենց գյուղում:

Մացակի յերգի ձայնը հասնում եր Բագրատին,
վորն այգու մեծ ընկույզենու տակ նստած կարդում եր:
Նա յերգի ձայնը լսելուն պես թողեց կարդալն ու սկը-

սեց ականջ դնել, իսկ քիչ հետո, յերբ հնձվորները հետ
եյին դառնել նախաճաշի, Բագրատը վեր կացավ և գը-
նաց նրանց մոտ:

—Ընդ, հարվածային հնձվորը յեկավ—նրան տեսնե-
լով—ասաց կող Մացակը և բոլորն ել նայեցին նրա
կողմբ:

—Այ տա, Մացակ, մի ավլուխտ դեսը տուր, իմս
տանն ա մնացել, մի տուր բրտինքը սրբեմ, ինքը բեզա-
րած կինի—հեգնաքով ավելացրեց Ղեվոնդը և մյուս-
ները ծիծաղեցին:

—Գնդակներդ տեղին չես արձակում, ընկեր Ղե-
վոնդ: Յեթե քրտինքի հարց գա մեջտեղ, վոչ միայն
դու, այլ ձեր բրիգադիրն ել չի կարող ինձ չափ քրտ-
ներ:

—Ե՞ս, խոսք ա, ասացիր, գնաց ելի...

—Ուզում ես, կարող եմ գործով ապացուցել—կա-
տակով ասաց Բագրատն ու նստեց նրանց մոտ:

—Երա, ձիշտ ա ասում, կաշխատի, սրան Արզու-
մանենց Ալեքսանի տղա կասեն. սրա հերը մինչեվ հի-
մա վոչ վորից հետ չի մնացել, վոր ինքն ել հետ մնա-
տեղից ավելացրեց Ահանջանենց Մահակը, վորը Բագ-
րատենց ամենամոտ զրկիցն եր:

—Հա, ախր ասում եմ, թե ինչու յես դու յել եղ-
քան լավ աշխատում. չե վոր դու յել իրանց հարեվանն
ես—այս անգամ ել մեջ մտավ Աստղիկը:

—Հա, բաս ինչ ես կարծում. մտնից եմ վատ աշ-
խատում վոր—տրդեն լրջացած, բրիգադիրի խոսքերից
քիչ ել զգաստացած պատասխանն Մահակը:

—Մի վիրավորվի, Մահակ ապեր, հանափ եմ անում:

—Բայց քո հանափը կարող ե դանակ դառնալ—կա-
մաց նրան զդուշացրեց Բագրատը:

—Ե, լավ, դու յել կրակի վրա յուղ մի ածի. վոչ.
ինչ ել չի դառնա. յես զիտեմ, թե ինչ եմ ասում—
բարձր ձայնով, գեպի Սահակ ապոր կողմն աշքով ա-
նելով՝ ասաց Աստղիկը:

Աստղիկի բրիգադը կոլտնտեսության ամենակար-
գապահ, ամենաաշքի ընկնող բրիգադն եր: Այդ բրի-
գա-ում դեռ վոչ մի դժգոհություն չեղ տեղի ունեցեց
Նախանավանդ աշխատա՞քի ժամանակ՝ դեռ վոչ մի ա-
նախորժ գեպք չեր պահել: Դրա համար եր, վոր Աստ-
ղիկն այնքան վստահ եր խոսում:

Նախանավանդ հետո, յերբ բրիգադը նորից վեր կա-
ցավ աշխատա՞քի, Բագրատը վերցրեց Մացակի ման-
գադը և ինքն ել սկսեց հնձել Աստղիկի հետ միննույն
կողմից:

Մյուսները մի պահ իրենց գործը թողաձ Բագրա-
տին ելին նայում, թե ինչպես ե նա հնձում: Նա ճիշտ
ե, թեև անվարաժ, բայց այնուամենայնիվ կարողա-
նում եր հնձել:

Հնձելիս Աստղիկն աչքի տակով նայում եր նրան
և տեսնում եր, վոր դժվարանում ե, հետ ե մնում: Դրա
համար ինքն ել եր դանդաղ հնձում, վոր Բագրատը
հասցնի: Իսկ Բագրատն իր հետ մնալլ տեսնելով, ա-
վելի յեր շտապում, և այդ ժամանակ նրա մի ձեռքով
բռնած կոշտացած ցողունի վրայից մանգադը հանկարծ
սահեց ու կտրեց մատը: Բագրատն ուզից այդ մի պահ
ցոյց չտալ, բայց արյունն իսկոյն հոսեց նրա մատից
և թափելով արեի տակ փայտին տվող մանգադի վրա,
կարմրացրեց նրան:

—Մատդ կտրեցիր—շատ ցածր, մյուսներին անլսե-
լի ձայնով հարցրեց Աստղիկը:
Բագրատը առանց նրան պատասխանելու ուղղվեց

և մյուս ձեռքը տարավ գեպի գրպանը՝ թաշկինակը
հանելու:

—Հը, բաջողի, չասացի, վոր հավագ մի քիչ քեզ
պահես—նրա մատի արյունը նկատելուն պես ասաց
Դեղոնդը:

Բագրատը նրան վոչինչ չպասխանեց: Նա լուռ՝ փա-
թաթեց մատը և ուզեց նորից հնձել, բայց Աստղիկը
թույլ չտվեց:

—Թող, բավական ա վորքան հնձեցիր:

Բագրատը կարծեց, թե Աստղիկն իրեն ծաղրում ե
և ասաց.

—Դու մի կարծիր, թե յես պարտվեցի: Սա մի
պատահմունք ե, վոր բոլորի հետ ել կարող ե պա-
տահել:

—Դե իհարկե, հասկանում եմ—լրջորեն ասաց
Աստղիկը—միայն թե մատիդ արյունը կխանգարի և
կփասի: ավելի լավ կանես, վոր թողնես:

—Լավ, յեթե այդքան մտածում ես իմ մասին, այդ
գեպքում կթողնեմ—ժպտալով ասաց Բագրատն ու նա-
յեց Աստղիկին:

Բագրատը նայելիս Աստղիկի գեմքը շիկնեց և նա
գլուխը կախեց: Հետո Բագրատն ել վոշինչ չասաց: Նա
մանգադը վերցրեց, բերեց դրհց մյուս իրերի մոտ և
մի քանի քայլ ցածրանալուց հետո կրկին հետ նայեց:
Աստղիկը թեպետ կուցել եր, իբր թե հնձում ե, բայց
ծածուկ, Բագրատի հետեւից նայում եր: Այդ ժամա-
նակ նրանց հայացքները նորից հանդիպեցին իրար և
իսկույն ելի անջատվեցին:

ժամանակ զյուղի աղբյուրից քիչ վերև, հանկարծ Աստղիկը դուրս յեկավ նրա դեմ:

—Եսպես ուշ վմբանեղից—Բագրատին տեսնելուն պես հարցրեց նա:

—Դեռ նոր եմ վերագտնում տուն, իսկ դժու

—Ես ել կովի հետեւից: Նախիրը յեկել ա, իսկ մեր կովը չկա: Ասում եմ գուցե ես վերեներում լինի:

—Իսկ յեթե հանդում մնացած լինի:

—Նախապահն ասում ա, վոր բերել ա զյուղ:

Աստղիկը խոսքը դեռ չեր վերջացրել, յերբ ամուսինը մյուս փողոցից նրա գեմ դուրս գալով շատ խիստ կերպով ասաց.

—Աստղիկ, ինչ խոսելու ժամանակ ա, հրեն հորթը բակում իրան սպանում ա, կովը չկա, իսկ դու խոսելով ես զբաղվում:

Ամուսնու խոսքերը սուր կերպով ազդեցին Աստղիկի վրա: Նախավանդ, վոր այդ ասվեց Բագրատի մոտ:

—Ինչ ա, աշխարհը խորտակվեց—արտաքուստ հանգիստ, բայց ներքուստ դժոհն պատասխանեց Աստղիկը.—Կովը չկա՝ կճարենք ելի:

Սահակը չլսեց կնոջ խոսքերը. նա շատ հուզված հեռացավ կնոջ մոտից, իսկ նրա գնալուց հետո Բագրատն ասաց.

—Լավ, գնա, թող Սահակը չանհանզստանա:

—Ցեթե ուզում ա, թող իզուր տեղից անհանզստանա:

—Չե, լավ չի. այնուամենայնիվ պնդք ե մի ընդհանուր լեզու գտնեք:

—Մենք ընդհանուր լեզու ունենք. համա գե ես որ շատ եր տաքացած, չեմ իմանում ինչ ա պատահել:

—Աշխարհում շատ բան կպատահի—ասաց Բագրատն ու ձեռքը մեկնեց նրան, Աստղիկը մի պահ շը փոթվեց և չիմացավ, թե ինչու յե նա ձեռքը մեկնում, բայց մեկել ինքնաբերաբար ձեռք տվեց նրան և Բագրատը սեղակով նրա ձեռքը՝ հեռացավ:

Աստղիկը հասավ ամուսնուն, միասին յերկար ժամանակ փնտրեցին կովին և միայն ուշ յերեկոյան նըրբան գտան գերեզմաններից բարձր, մի քանդիմած տան պատերի տակ բուսած կանաչ խոտերն արածելիս:

Սահակը կովին տեսնելուն պես իսկույն հարձակվեց նրա վրա և ձեռքի ձիպոտով սկսեց հարվածել: —Լավ, ուժով կովին ա պատրւմ:

Կովը փնտրելիս ամբողջ ժամանակ նրանք լուռ են: Աստղիկի հարցին Սահակը մեկ ուզեց չպատասխանել, բայց մեկ ել ասաց.

—Բա ինչ, ուժով քեզ չի պատռմ, կովին ել չի պատի:

—Ըսկի յել չե. ուժով ինձ շատ լավ ա պատռմ: Սունց յերկար-բարակ մտածելու, ամեն մի պատահած մարդու մոտ ձիդ չափ ես զցում:

—Այսինքն ինչ ես ուզում ասել:

—Շատ հասկանալի յա:

Սահակը մի պահ լսեց և քիչ հետո ասաց.

—Ի՞նչա, դուրդ չի գալի՞ս: Ինձ ել չի շատ բան դուրդ գալիս...

—Ի՞նչը չի քեզ դուր գալիս վոր:

—Եդ կարեվոր չի:

—Դե ուրմն լոիր:

Բայց Սահակը լոել չեր կարող: Նրա սրտում արդեն վորոշ բան կուտակվել եր և նա չեր կարող այդ կուտակից չպատվել:

Կովը տուն բերելուց հետո, յերբ մայրն սկսեց կը.

թել, իրենք բարձրացան տան կտուրը և Սահակը ա-
սաց.

— Դու քեզ մի քիչ շատ ես թույլ տալիս նրա հետ...

Կինը մինչ այդ ել զգում եր, թե ինչու յե Սահակը
դառնացած և յերկար հարց ու փորձի կարիք չկար-
եա հենց ինքն եր ուզում սկզբից այդ մասին ասել
բայց դեռ զապում եր: Ամուսնուց այդ խոսքերը լսե-
լուն պես շատ դառնացած ասաց.

— Իսկ դու մի քիչ մտածիր, հետո խոսիր:

— Յես լավ եմ հասկանում իմ ասածը:

— Հենց բանն ել են ա, վոր լավ չես հասկանում,
ավել-պակաս խոսում ես ու չես ել ամաչում:

Կնոջ այդ խոսքերն ազդեցին Սահակի վրա: Նա
Աստղիկի նկատմամբ յերբեք չեր կասկածել: Վոչ մի
անգամ ել մտքով անց չեր կացրել թե Աստղիկը
յերբ և ե նման բան կարող ե թույլ տալ: Միայն վեր-
ջին որերն եր վորոշ կասկածներ ունենում դեպի Բագ-
րատը, վորն Աստղիկի հետ հանդիպելիս խոսում եր
ժամանուի, շատ սիրալիր, իսկ այդ բոլորը Սահակին
դուք չեյին գալիս: Իր զգացմունքները Սահակը չեր
կարողանում թագցնել, այդ դառը մաղձի նման կըր-
ծում եր սիրտը: Նա վերջին որերն ամբողջովին կոր-
ցրել եր իր աշխուժությունը: Գործից գալիս իր թե
չե, լուռ ճաշում եր և իսկույն պառկում: Բայց վո-
րովհետև կոնկրետ վոչինչ չփխտեր, միայն յենթա-
դրում եր, դրա համար ել իրեն զապում եր և չեր կա-
րողանում սրտինն ազատ ասել: Իսկ այդ որն այլևս
չկարողացավ իր զգացմունքները թագցնել:

Կնոջ խոսքերից հետո չկարողանալով նրան պա-
տասխանել, լուռ, շորերը հանեց և այդ գիշեր, ամուս-
նական կյանքում առաջին անգամ, կնոջից գժգոն մը-
ռավ անկողին...

5

Յերեկոյան, աշխատանքից վերադառնալուց հետո,
Բարսամ ապերը զյուղի բանուկ փողոցներից մեկում
հանդիպելով Բագրատին՝ նրան կարդալ եր տալիս տը-
ղայից նոր ստացած նամակը:

Բայց նամակի մի մասը նա դեռ չեր կարդացել,
յերբ Բարսամ ապերը հանկարծ թողեց նրան և վազեց
դեպի Աստղիկը, վորը մի քանի քայլ բարձրից անց-
նում եր:

— Աստղիկ, են աշխորի հարցն ախր վի՞նց յեղավ ե,
բա չպարզեցի՞ր:

— Անհանգիստ մի լինի, Բարսամ ապեր, հաշվապա-
հի հետ արդեն խոսացել եմ—պատասխանեց Աստղիկը
և տեսնելով Բագրատին ձեռքին բռնած նամակը կար-
դալիս, կատակեց.

— Եղ ինչ, չինի Բարսամ ապոր գրած բանաս-
տեղծությունն ես կարդում:

Բագրատը նամակի ընթերցումը վերջացնելուց հե-
տո տվեց Բարսամ ապոր և նոր միայն պատասխանեց.

— Եօ, բանաստեղծություն չեմ կարդում. սա Բար-
սամ ապոր տղայի գրած նամակն ե: Յերեվում ե, վոր
խելոք տղա յե դառնալու: Իսկ դու, ինչ ե, եղքան ա-
տում ես բանաստեղծությունը:

— Հնդհակառակը, յես բանաստեղծություններ շատ
եմ սիրում. ասենք դու յես անշնորք, վոր քո գրած
գրքից մեկը չես տալիս նայենք: Լաել եմ, վոր զիքք
ես զրիլ:

— Եօ, ինչի՞դ ե պիտք զիրքը. ինչ գրքից պետք ե
իմանաս, ինձնից իմացիր ելի. չե վոր ինքս եմ քեզ
մոտ:

— Եղ ուզում հս ասել, վոր քո գրածներից սենք
բան չինք հասկանալ ելի:

— Ձե յեղբայր, ինչիւ յես նման յեզրակացություն։
Ներ անում իմ ասածից. յես բոլորովին ել այդ չեմ
ուզում ասել։ Դու հիմա հեր ես գնում։

— Լորի հավաքելու, մեր բաղչն։
— Իսկ ձեր բաղչում բացի լորուց ել ի՞նչ կա։
— Թթու շոր. յեթե ուզում ես՝ խնդրեմ։
— Շլոր չե, բայց քեզ հետ խոսելու համար կգամ,
յեթե թույլ տաս։

— Ինչո՞ւ չե, կարող ես—ասաց Աստղիկն ու ինքն
առաջ ընկավ, բայց մի քանի քայլ չգնացած, նա զըդ-
չաց իր առաջարկից։ Առանց այն ել Սահակը կասկած-
ներ ե ունենում։ Իսկ յեթե այժմ ել իմանա, ավելի
կկասկածի։

Աստղիկն անհիմ կասկածներից, ինարկե, չեր քաշ-
վում. բայց վորովհետև այդ կասկածներն ազդում եյին
Սահակի տրամադրության վրա և կարող եյին ավելի
սուր բնույթ ստանալ, դրա համար ել նա չեր ցանկա-
նում, վոր նման կասկածներ լինեն։

Սակայն արդեն ուշ եր։ Հրավիրելուց հետո այլևս
անհարմար եր հրաժարվել։

Ծառերի գագաթներից արևն անցել եր։ Լորու
մարգերի կողքերին տնկած ձողիկների վրա փաթաթ-
ված խիտ տերևներից բանջարանոցն ավելի մութ եր
յերեվում։

Բագրատը յերբ բանջարանոց մտավ, իրեն անհար-
մար դրության մեջ զաց։ Նրան ել թվաց, վոր կա-
րող են զանազան կարծիքներ անել և անսիջապես հետ
դառնավ։

— Ավելի լավ չե լինի, վոր յես դրսում սպասում,
իսկ դու այդտեղ գործդդ վերջացնես։

— Դու գիտես—անմիջապես նրան հասկանալով՝
պատասխանեց Աստղիկն ու ինքը ներս մտավ։

Բագրատը դրսում, այգու պարսպից վոչ հեռու
նստեց մի քարի վրա և վորոշ ժամանակ լուռ սպասե-
լուց հետո, իր նստած տեղից, շարունակեց ընդհատ-
ված խոսակցությունը։

— Աստղիկ, ուրեմն նեղացել ես ելի, վոր գրքիցս
քեզ չեմ նվիրել։

— Ձե՛, նեղանալու բան չկա, չես ուզեցել, չես տվել
ելի—այգու ներսից պատասխանեց Աստղիկը։

— Յեթե անկեղծ ասեմ, չես նեղանա հու։

— Անկեղծ չես ասի, բայց գե ասիր։

— Անկեղծ կասեմ. յես չեմ կարծել, թե այդ քեզ
համար վորեւ և նշանակություն կարող ե ունենալ։ Հե-
տո, դու վմբարդից գիտես, վոր յես գիրք ունեմ գրած։

— Դե այդ մինչև քո գալն ել գիտեյի։ Քո գրածնե-
րից գես մի քանիսն ել կարդացել եմ լրագրում։

Այդ խոսւերից Բագրատն ավելի վոգենորվեց։ Աստ-
ղիկն ավելի հետաքրքրեց Բագրատին։ Նա վորպես
մութ վարագույրի հետևում թագցրած մի ուշագրավ
բան, հետզհետե ավելի յեր բացվում և գրավում Բագ-
րատին։

Նա յերբեք չեր կարծում, թե Աստղիկը կարող ե
բանաստեղծությամբ անզամ հետաքրքրված լինել։

— Աստղիկ, որինակ ի՞նչ ես կարդացել իմ գրվածք-
ներից, վորեւ բան հիշում եմ։

— Հիշում եմ, որինակ. են գրվածքդ, վորանեղ քույ-
րը պատմում ա, թե իր յեղբայրն ինչպես եր կովում
դաշնակների գեմ, իսկ իրենք, մի քանի աղջիկներ, ձեռ-
նոցներ և գուլպաներ եյին գործում, վոր կարմիրները
սարերում հագնեն։ Եղ շատ լավ բան ա. ինձ շատ ա
դուր յեկել։

— Եղ գուցե նրանից ե, վոր դու ինձ անձամբ ճա-
նաչել ես և իմ գրածը քեզ ավելի յե դուր յեկել։

— Զե, կարդալիս սկի չեյի յել իմանում, թե գու
յես գրել: Յերկորդ անգամ կարդալիս նայեցի և նոր
իմացա, վոր քո գրածն ա:

— Իմ գրվածքները, վոր քեզ այդքան դուր են զա-
լիս, այդ գեպքում առավոտյան գնալուց առաջ գըր-
քեցս մի որինակ անպայման կրերեմ քեզ համար:

— Բայց վմնց թե գնալուց առաջ, յերբ ես գնալու,
վոր:

— Հենց առավոտյան գնալու յեմ...

Այդ խոսքերը ցնցիցին Աստղիկին: Նա մի պահ ի-
րեն կորցրեց և վոչինչ չկարողացավ ասել:

— Ինչ ե, դու չեյիր ուղենան, վոր յես եսպես շուտ
գնամ—նրա հան կարծակի լոռությունը տեսնելով՝ հար-
ցըրեց Բագրատը:

Աստղիկը մի քիչ լոեց և նոր միայն պատասխա-
նըց.

— Ավելի լավ ե, վոր շուտ գնաս...

— Ինչու նրա միանգամայն անսպասելի այդ հար-
ցեց զարմացած՝ հարցըրեց Բագրատը:

— Կարենը չե:

— Ինչպես թե, ուրեմն գաղտնիք ե՞:

— Ի՞նչ ա, սենք չենք կարող գաղտնիք ունենալ:

— Ինչու չե, յեթե այդ ընտանեական ե և իր մեջ
ընդհանուր հասարակական վոչինչ չի պարունակում:

— Ուրեմն հենց այդպիսինն ա—կտրականորեն ա-
սաց Աստղիկն ու լոեց:

Արդեն մթնել եր: Յերկնքում յերեսում եյին աստ-
ղերը: Աստղիկը հավաքած լորին լցրեց իր հետը տա-
րած կողովի մեջ և բանջարանցից դուրս յեկավ:

Դրում Բագրատը նրան հարցըրեց.

— Աստղիկ, ինձ հետաքրքիր ե իմտնալ, թէ վմնց
եք ապրում ամուսնուդ հետ: Արդյոք հաշտ թք:

— Լավ, ինչ վործ ունես մեր ընտանեկան գործերի
հետ:

— Աւզզակի հետաքրքրվում եմ:

— Զգիտամ, թե ինչու յես հետաքրքրվում, ըայց
վորովհետեւ եդ մասին մի անգամ ել ես հարցըրեւ, դրա
համար ել կասեմ:

Եեվ Աստղիկը պատմեց, վոր ամուսնու հետ շատ
լավ հարաբերությունների մեջ են: Նրանք միասին
սովորել են կուրսերում, այժմ կոլտնսեսությունում
ակտիվ աշխատանք են կատարում, նյութապիս ապա-
հով են և իրենց ընտանեական կյանքում առհասարակ
վորեւ և գժգոնություն չի յեզել:

— Միայն վերջին որերս մեր մեջ մի թեթև գժգո-
նություն տեղի ունեցավ, այն ել քո գնալուց հետո
յերեկի շուտով կանցնի:

— Այդ գժգոնությունն իմ պատճառով ե առաջա-
ցել:

— Իե ինչ վոր հարկավոր եր, յես ասացի...

— Բայց, Աստղիկ, դու ինձ շատ ես հետաքրքրում—
քիչ լոելուց հետա ասաց Բագրատը:

— Ի՞նչպես...

— Բնդինարապիս, չվախենաս խոսքերիցս, դուրըս
ես գալիս...

— Իցուր բան ա. Ինչ կարիք կա եդ մասին մտա-
ծելու, անցած գործա ա... Ուրեմն եգուց գնալու յես:

— Այս, առավոտյան...

— Եդ գեպքում...

— Դեռ վոչ, հիմա մասս բարեւ չենք ասի—իսկույն
նրա միտքը հասկանալով ասաց Բագրատը—առավոտ-
յան գեռ յես կզամ քեզ մոտ և իմ գրքից մի որինակ
անպայման կրերեմ քեզ համար:

Աստղիկը լուս գնաց: Բագրատը նրանից մի քա-

սի քայլ հեռանալուց հետո հանկարծ կանգ առավ և
կանչեց.

—Աստղիկ:

Աստղիկը հետ նայեց, Բագրատը նորից մոտեցավ
նրան:

—Վերջին անգամ զիտեմ ինչ կասեմ, գիտակից
յեղիք, որինակելի մարդ, ամուսնուդ շատ սիրիբ: Իս-
կապես զոր չպետք և տարվել բոպեներով:

—Են, ինչ կարիք կա ասելու — ժապտալով ձեռքը
թափահարեց և հեռացավ Աստղիկը:

Յերբ նրանք իրարից բաժանվեցին, լուսինն ար-
դեն արձակել եր կանթեղ շողերը:

6

Բանջարանոցից վերադառնալուց հետո Սահակը
զյուղամիջում մի քիչ ուշացավ, վոր կինը տուն գնա,
պառկի, գրանից հետո ինքը գնաց տուն:

Դեռ մութը չնկած, զործից Ներադառնալուց հետո,
յերբ նա մորից իմացել եր, թե կինը գնացել եր բան-
ջարանոց, ինքն ել եր գնացել այնտեղ: Բայց զօրով-
հետև Աստղիկը զյուղամիջում մի քիչ ուշացել եր
Բարսամ ապոր և Բագրատի հետ խոսելիս, դրա հա-
մար Սահակն ավելի շուտ եր հասել այնտեղ, քան թե
ինքը:

Բանջարանոցից Սահակը տեսնելով, վոր կինն ու
Բագրատը միասին են գալիս, նա իրեն կորցրեց, ար-
յունը խիեց գլուխը և մի պահ շշմած մնաց տեղում
կանգնած: Ուզեց ուղղակի գուրս գալ նրանց գեմը, վոր
նրանք տեսնեն իրեն, բայց մեկ ել մտադրությունը
փոխեց, թագնվեց բանջարանոցի ամենատերևախիտ
մասում և սկսեց ականջ գնել, թե նրանք ինչ են խո-
սում:

Նրանց խոսակցությունը յերկար ժամանակ լսելուց
հետո, յերբ համոզվեց, վ՝ ինքը սխալվել ե, ամաչե-
լուց ել չեր կարողանում թագնված տեղից գուրս գալ:
Նրանց գնալուց հետո Սահակն ել զուրս յեկավ թագ-
նըված տեղից և մի այլ ճանապարհով գնաց գյուղա-
մեջ:

Ինքը յերբ գնաց տուն, կինն արգեն պառկել եր:
Միայն մայրն եր արթուն և Աստղիկի տարած լրին
տապակում եր, վոր վաղ առավոտյան նրանք իրենց
հետ արտը առնեն:

Մայրը հարցրեց, թե նա ինչու յե այդքան ուշ
գույնիս տուն, բայց Սահակը չպատախանեց: Նա լուս
հանեց շորերը և մտավ անկողին:

Առավոտը շուտ, զործի գնալու ժամանակ, մեկը
նրանց գարպասը թակեց:

Սահակի մայրը գնաց դուռը բանալու — Բագրատն
եր:

—Գյովհար բիբի, ժողովուրդը վեր ե կացել — հարց-
րեց նա:

—Հա, մատաղ լինեմ, պատրտստվում են զործի
գնալու:

Բագրատը ներս գնաց: Նրանք, ամուսին ու կին,
վոտքի վրա եյիս:

—Աստղիկ, յես հիմտ գնում եմ, բայց գնալուց
առաջ քեզ համար բերել եմ գիրքից մի որինակ:

—Ծնորհակալ եմ, վոր խոստումդ կատարեցիր...

Աստղիկը յերբ ձեռքը մեկնեց նրանից գիրքը վերց-
նելու, այտերը կարմրել եյին և ավելի եյին այնացել
նրա սև սև աչքերը: Այդ Բագրատն ել նկատեց և ու-
զեց շուտով հեռանալ նրանց մոտից: Իսկ Սահակը,
վորպես մի ոտար մարդ, լուս, քաշվել եր մի կողմ և
նրանց եր նայում:

Բագրատը նրանց հետ ձեռք տվեց և ուզում եր դուրս գնալ, բայց Աստղիկը մի պահ կանգնեցրեց նը- րան և վազելով տնից բերեց վաղորոք պատրաստած մի փունջ բաց դեղնազույն ժաղիկ.

— Բագրատ, լսել եմ, վոր գրողները շատ են սիրում ծաղիկ: Սա անթառամ ծաղիկ ա, մեկ որ աշխատան- քից հետո յես եմ քաղել: Թող քեզ մոտ մնա: Ինչքան ել պահես, միշտ եղաքես թարմ ա մնալու, գույնը չի դժելու...

Աստղիկը հուզվել եր, յեթե ամուսնուց և կեսրոջից չամաչեր, նա կարող եր լաց լինել: Այդ Բագրատն ել նկատեց և նրանց հետ ձեռք տալով, շտապ դուրս գը- նաց:

Բագրատի գուրս գնալուց հետո, Աստղիկը շտապ- շտապ թերթեց նրա տված զիրքը և աչքին ընկավ գրքի շրջ եջի վրա թանաքով մակագրած:

«Մանկության լինեցրոց, Աստղիկին, գիտակից
լինեցրազ՝
ամենալավ ցանկություններով—հեղինակից»:

Աստղիկի ձեռքից զիրքը վերցրեց Սահակը, նա- յօց, կարգաց մակագրածը և թողնելով պատուհանի վրա՝ կնոջ հետ միասին տնից գուրս գնացին: Իսկ ճա- նապարհին նա քայլում եր լուս ու մտածում՝ այն ծա- ղիկների, նվիրած զրքի և Աստղիկի մասին...

1934

ԱՅՆ ՑԵՐԱԶՈՒԻՆ ԱՂՋԻԿԸ

(ԼՐԱԴՐՈՒԴԻ ՈՐԱԳՐԻՑ)

Նինա Կամնելվալին

Այսոր առավոտյան նա թռավ...

Յես ձեռքս դրած ճակատիս աչքերս արևի ծակող ճառագայթներից եյի պաշտպանում, բայց թափան- ցիկ ճառագայթներն այնքան խիտ եյին, վոր սուր ասեղի նման մատներիս արանքիցն ել եյին ներս սողոսկում: Յես կկոցած աչքերով հազիկ եյի տես- նում նրան, յերբ նա ճախրող սավառնակի կարին: Կայի լուսամուտից իր մեկնած ձեռքն եր թափահա- րում: Այդ ժամանակ յես զգում եյի, վոր բիբերումս կուտակվում են արցունքի մանրիկ կաթիլները: Ո՞վ գիտե, նման արցունքուտ աչքերով թերես մենակ յիս չեցի նրան ճանապարհում:

Այդ որը, գեռնու արևել չելած, հազարավոր մարդիկ եյին հավաքվել սավառնակակայան նրան ճանապար- հելու: Իսկ նախքան սավառնակի թռչելը, սավառնա- կակայանի ընդարձակ հարթավայրում, թնդում եր յե- րաժշտախումբը: Ամբողջ տարածության վրա, խումբ- խումբ պարում եյին նրան ճանապարհողները, այդ պահին մոռանալով, թե ինչու յեն նրանք այդտեղ յե- կել, ինչու յեն այդպես ուրախանում: Իսկ մինչ այդ,

ծնընդհատ գալիս. եյին բազմաթիվ ավտոմեքենաներ, ապկազարդ, աշխառյժ աղմուկով՝ բոլորն ել նրան ճանապարհնելու:

Նա միշտ իմ թեփից բռնած, բայց շրջապատճած նաև բազմաթիվ այլ մարդկանցով, անընդհատ շրջում եր մի տեղից մյուսը, մի խմբից մյուսը, մինչև վոր որը հետզհետեւ ավելի բացփեց, մինչև վոր արեի ճառագայթներն ավելի ուժգնորեն սկսեցին թափվել վերից՝ ամբողջ փնջերով:

Յերբ արագորեն սկսեց պատվել սավառնակի պրոպելերը, այդ ժամանակ ավելի բարձր թնդացին յերաժշտախմբերը և ավելի խառնվեցին իրար մարդկացին զանդվաճները:

Նա մոտեցավ իր մի քանի ծանոթներին, ձեռք բռնեց նրանց հետ և ամենավիլջինը յեկավ գեպի ինձ: Նա սկզբից մի պահ լուս նայեց, ինչ վոր վարանեց, ուղեց միայն ձեռք տալ, բայց մեկ ել ժպուալով, վրճականորեն շրթունքները մոտեցրեց... Յես մը պահ կարծեցի, թե այդ ինչ վոր կատակ ե, ինչ վոր յերազային, անիրական մի բան, բայց այդ իսկություն եր, այդ նրա անուշ շրթունքներն եյին և նրա ձեռքն եր իմ ափում սեղմած...

Խեկ հետո յես նրան մեկ ել տեսա այն ժամանակ, յերբ իր մեկնած ձեռքն եր թափահարում գեպի յերկինք սլացող սավառնակի կաթինկայի բաց պատռւանից:

Ներքեում դեռ նվազում եյին ցուծուն յերաժշտախմբերը:

Սավառնակը հետզհետեւ ավելի ու ավելի յեր բարձրանում, ճախրում կապույտ յեթերում և աստիճանաբար հեռանում մեր տեսողությունից:

* * *

Նրա մասին յետ առաջին անգամ կարդացի թերթում և նկարը տեսա տպագրված:

Նա համաշխարհային ուկորդ եր կատարել, Ամբողջ աշխարհում առաջին անգամ կինը պարացուառվ ցատ կել և 3000 մետր բարձրությունից...

Այդ նկարագրությունից հետո իմ յերեակալության մեջ նա պատկերացավ վորպես հաղթանգամ, առողջակազմ, բրոնզագույն մի աղջիկ, վորն իր մեջ սովորական կող վոչ մի հատկություն չունի: Իմ հիշողությունից հետզհետեւ անհետացավ նրա նկարից ստացած տպագորությունը, բայց նրա հերոսական քայլը յերբեք չեցի մոռանում: Լրագրում նրան մասին գրածից յես իմ հիշողության մեջ մի լիգենզար պատմություն հորինեցի և այդ պատմությունն ստիպեց ինձ նրան յերբեք չմոռանալու:

Շատ հաճախ նրան յես տեսնում եյի յերազում, զրուցում հետք, իսկ արթնանալուց հետո մի անձուկ ցանկություն եյի ունենում նրան տեսնելու իրական կյանքում, հետք խոսելու...

* * *

Մեկ որ, ուշ գիշերով, յերբ խմբագրությունից ուղղում եյի գուրս զայ, հեռագրաբերը հինգ դուն առաջ հանձնեց ինձ վերջին հեռագիրը: Բաց արեցի հեռագիրը—նրա մասին եր... Այդ իւքն եր գալիս մեր քաղքը:

Յես իսկույն նորից տեղս նստեցի, անձամբ պատրաստեցի հեռագիրը տպագրության համար, հաջորդորք որը նա լույս տեսավ մեր թերթի առաջին եջում:

Առավոտյան յես դնացի նրան դիմավորելու: Նա գալիս եր սավառնակով, իսկ սավառնակակայանն ար-

գեն լցվել եր նրան դիմավորելու յեկած սարդկանց
հոծ խմբերով:

Ամենքն եւ սրատրով սպասում եյին սավառնակի
յերևալուն: Յեզ վերջապես յերեաց սավառնակը, իսկ
նրա միջից դուրս յեկավ ինքը—այն աղջիկը, վորի
մասին այնքան յերազել եյի...

Ինձ թվաց, թե այդ նա չե: Դա միանգամայն ու-
րիշ մարդ ե: Յես իսկույն հիասթափեցի: Նա վոչ մի
նմանություն չուներ իմ յերևակայած աղջկա հետ:
Դա ավելի փոքրամարմին, ավելի բարակ, բայց շատ
ճկուն մի աղջիկ եր: Միակ նմանությունն իմ յերե-
վակայած աղջկա հետ—այդ նրա մարմնի գույնն
եր, կարմիր ցորնագույն, ավելի շատ արևավառ:

Նա աչքերով ինչ վոր անընդհատ վորոնում եր և
այդ պահին վառ ժամանակ տեսական:

Սավառնակն իջնելուն պես նա անմիջապես սա-
վառնակի կարինկայից դուրս յեկավ թեթև, վորպես
մի այցյամ, ցատկեց այնտեղից և միայն մի պահ
կանգնած մնաց: Նա աչքերով անընդհատ վորոնում
եր, մարդ եր վորոնում, թե ով եր նրան պաշտոնա-
պես դիմավորելու յեկել: Իսկ դրանք իսկույն հայտն-
վեցին: Նա թարմ, վառ ծաղիկների բազմաթիվ վնջե-
րի մեջ կորած, անմիջապես բարձրացավ նախորոք
պատրաստած ավտոմեքենայի մեջ: Յես մեր մեքենան
քշել տվեցի նրանց մեքենային համընթաց:

Սավառնակակայանում դեռևս նվազում եյին յերա-
ժըշտական ուրախ խմբերը, հեռվից ճոճվում եյին
բազմաթիվ ձեռքեր, իսկ մեր ավտոմեքենաները մի
տիրկար շարք կազմած՝ թոշում եյին դիպի քաղաքը:

* * *

Նա յեկել եր հեռվից, կարմիր մայրաքաղաքից,
Սեր քաղաքում մնալու յեր ընդամենը յերեք որ, վո-
րից հետո շրջելու յեր ելի ուրիշ քաղաքներ, ուրիշ
տեղեր:

Սյու յերեք որը նա ծաղկազարդ ավտոմեքենայով,
հատուկ ուղեկիցներով, շրջում եր մեր քաղաքի մի
զործարանից մյուսը, մի համալսարանից մյուսը, ուր
ավելի շատ յերիտասարդություն կար և նա ամեն տեղ
ել արժանանում եր ջերմ ընդունելության, բուռն հա-
մականքի: Նրան ամեն տեղ ել ընդունում եյին
փունջ փունջ, թարմ ծաղիկներով, մեծ վոգեսրությամբ:

Հիմարկության դարպասից սինչեւ միտինգի տեղը
նրան ձեռների վրա եյին տանում: Իսկ նա ուր վոր
գնում եր, այնտեղ իսկույն միտինգ եր վումարվում:

Ամբիոն բարձրանալիս նրա արտաքինը մի պահ
շշմեցնում եր բոլոր ներկա յեղողներին, թե նման
փոքրամարմին, քննույց արտաքինով աղջիկն ինչպես
կարող է այդքան մեծ սիսկ անել: Իսկ յերբ ըս-
կում եր խոսել, նրա ինքնավտան խոսքերը, նրա աս-
տիճանաբար բորբոքվող, վառ դեմքը բոլորին ել վո-
գեվորում եր:

Նա այնքան դուրեկան եր խոսում, այդ քնքույց,
այդ փոքրամարմին աղջիկն այնքան յեռանգով եր
խոսում, վոր պատմելու ընթացքում լսողներից վոչ
վոք մի ավելորդ բացականչություն չեր անում: Նրան
լսում եյին մեծ հիացմանքով թե հասակավորները,
թե յերիտասարդները: Ունկնդիրներին թվում եր, թե
տուածին անգամն եյին լսում այդքան հիասքանչ, այդ-
քան գրավիչ զրույց: Իսկ նրա զրույցներն անհետեանք
չեյին մնում: Միտինգում իսկույն և յեթ վորոշվում եր

պարաշյուտային բուրգեր կառուցել, կազմակերպել
պարաշյուտային խմբակներ և ուսումնասիրել պարա-
շյուտային գործը:

* * *

Խմբագրության կողմից ինձ եր հանձնարարված
թերթում լուսաբանել նրա յելույթները: Այդ որե-
րին յես միշտ նրա հետո եյի լինում: Այեն մի գոր-
ծարան, ամեն մի հիմնարկություն միասին ելինք զը-
նում: Այդ կործ ժամանակամիջոցում յես այսքան եյի
ընտելացել նրան, վոր կարծես թե մենք շատ վաղե-
մի, մանկության շրջանի ծանօթներ լինեցինք:

Ներջին որն եր մեզ մոտ: Այդ որը, յերեկոյան,
տեղային ագության լեզվով լույս տեսնող կոմյերի-
տական թերթի խմբագրությունը յերեկույթ եր կազ-
մակերպել նրա պատվին: Մենք ցերեկով պայմանա-
փորփի եյինք միասին գնալու այդ յերեկույթին:

Յես գնացի նրա մոտ ժամանակից բավականաչափ
առաջ: Զկարուղացա մինչև պայմանավորված ժամեն ըս-
պասել: Այդ յերեք որը յեթե մի վարկյան անգամ
նրան չեյի տեսնում, ինձ թվում եր, թե ինչ վոր մի
բան եմ կորցրել, վերին աստիճանի անհանգիստ եյի
զգում: Թվում եր, թե գերփել եմ նրանով:

Յերբ հյուրանոցի սանդուխքներից բարձրանում
եյի, նա յերրորդ հարկի սենյակներից մեկի պատըշ-
գամբում նստած գիրք եր կարդում: Յածրից կանչեցի
— զուխը բարձրացրեց և ժպտալով յեկավ դռւող բա-
նալու:

Մենք յերկուսով նստեցինք բաց պատուհանում և
յես խնդացի նրան պատմելու իր առաջին թափչեի
մասին, բայց նա այդ կապեց նրա հետ, թե ինչպես ե
առկասարակ սովորել թուչելը:

* * *

Նա ծնվել է Ֆուապեյում — Հոկտեմբերից մեկ տա-
րի առաջ: — Հորը գնդակահարել են քաղաքացիական
կորինքների ժամանակ, յերբ աղջիկը դեռ թոթովախոս
եր:

Հետո աղջիկը մեծացել և այդ արևշատ, ծովափնյա
քաղաքում, ուր ամառները ջեռում են արեի խիտ
խուրձերը, իսկ ձմռանը հարձակվում է բքաշունչ
ցուրտը:

Այդտեղ, այդ բանվորական քաղաքում, ուր բազ-
մաթիվ նավթաթոր գործարաններ են ծխում, այդ
գործարաններից մեկում աշխատել և նրա մայրը, իսկ
ինքը սովորել և գործարանին կից ֆարզործուում:
Ֆարզործուուից հետո գնացել և համալսարանում սովո-
րելու, բայց չեն ընդունել գեռահասության պատճա-
ռով: Այդ գեռահասությունը նրան վորքն արգելքնե-
րի առիթ և հանդիսացել:

Ծուապից նա յեկել և Մոսկվա, ընդունվել ֆի-
զիքական կուլտուրայի ինստիտուտը: Նա այդտեղ և
սովորել կարգալ «Կապիտալ», «Լենինիզմի հարցերը»
և բազմաթիվ այլ գրքեր, գիտելիքներ: Նա այդտեղ և
առաջին անգամ լսել, թե ինչ բան և պարաշյուտը, սա-
կան նրա մարմնի վորքությունն այդտեղ ել արգելք
հանդիսացել: Չեն վստահացել նրա փոքր մարմնին
մինչև վոր ամեն մի զժվարություն հողթահարել և
նրա համառ կամքը:

Առաջին անգամ ցատկել և համեմատարար ցածր
տարածությունից: Հետզհետե բարձրացրել և իր
թոփչեների բարձրությունը, բազմազան ձևով, բազ-
մազան պայմաններում, իսկ իր քսաներորդ թոփչքով
համաշխարհային ոեկորդ և տարել — ցատկելով յերեք

հազար մետր բարձրությունից, վոր մինչև այժմ աշխարհում վոչ մի կին գեռ չի ցատկել:

— Իսկ սարսափելի չե այդքան բարձրությունից իրեն ցած նետելը:

— Վոչ բոլորովին... Այդ թվում և նրանց, ովքեր հողից բարձր գեռ չեն յեղել: Նրանք, ովքեր սովորել են ցատկելուն, նրանց համար ավելի գուրեկան, ավելի յերազային վոչինչ չի կարող լինի: Չե վոր մարդ միայն այդտեղ ե, թեկուզ մի քանի վարկյանով, թըռչում վորապես ազատ թռչուն, ճախրում անծայրածիր, կապույտ յեթերում, ավելի ազատ, ավելի բարձր, քան յերկնային բազեն, քան մենավոր արծիվը: Չի կարող լինի այնքան գրավիչ մի զգացմունք, վորքան կապույտ յեթերում լողալը: Յես յերգում եյի, բայց իմ ձայնն ել ականջներիս չեր հասնում: Յես լսում եյի միայն ողի ուժգին հոսանքը և զգում եյի միայն այն, վոր յես թեավորված ճախրում եմ ողի այդ հոսանքի մեջ: Յես հիշում եյի հոգդանովի «Կարմիր ասեղ»-ում նկարագրած ինժեներէն, բայց նա միայն ֆանտազիա յեր, զուտ յերկակայություն, իսկ յես-ինքս եյի թըռչում ազատ ողի մեջ...

Պատմելիս նա ավելի յեր վոգենորվում, ավելի եյին վառվում նրա աչքերը մի չերմ կարոտից:

Նա, այդ վոգենորության ընթացքում, իր ձկուն մարմուկ թեքվեց գեպի ինձ, բայց ուշքի գալով, իսկույն ելի հետ քաշվեց,

Այդ մոմենտին յես ել եյի գրավել նրանով: Վոգենորությունից իմ աչքերն ել եյին վասմում: Բայց յես վոգենորվել եյի վոչ միայն նրա պատմածով, այլ և իրենով, այդ յերազուն, այդ բարակիրան աղջկանով: Այդ դրությամբ յես ձեռներս ինքնարերարար

մեկնեցի նրան զրկելու, իմ կրծքին սեղմելու, բայց նա իսկույն ազատվեց ինձնից, հետ քաշվեց մի քիչ և բարձր ձայնով սկսեց ծիծաղել, ու նրա այդ զրունդում ծիծաղն ինձ ուշքի բերեց:

* * *

Եերբ մենք կոմյերիտական թերթի խմբագրության կազմած յերկույթից դուրս յեկանք, դրսում զով երև և տիրում եր մի անուշ անդորրը:

Քաղաքից գուրս, ծովի վրա, փովել եր լուսնի բարակ շլարշը: Արորգում եյին ծովի մեղմիկ ալիքները և նրանց մանրիկ կուտակներն իրենց գիրկն եյին առնում լուսնի փափած շողերը և իսկույն թագցնում ջրի անհատակ խորքերում:

Մենք յերկուսս ել փակ սենյակում յերկար նստելուց հօգնել եյինք: Դրսում, լուսնի շողերի տակ, այդպես կիսաթմիր գրությունը մեզ ավելի յեր դուք գալիս: Մենք ցածրացանք գեպի քաղաքային արգին, կես գիշերով, ուր բոլորն ել արդեն քաշվել եյին իրենց տները, նստեցինք ազատ մի նստարանի վրա: Նստարանից քիչ հեռու, լուսնի քուլաների տակ, բաց կարմրագույն վարդերն եյին որորգում: Թվում եր, թե ծովից յեկող մեղմ զեփյուռի տակտի տակ այդպես նրանք ել են նիհուում:

Այդուղի, մենք յերկուսով լուս, միայն քամու սոսափյունն եյինք լսում: Հետո լուսթյունը խզեցի յես.

— Ուրիմն վերջին յերկուն ե—ասացի յիս և նա իսկույն ինձ հասկացավ:

— Թերեկս վերջինը լինի...

— Կարող ե պատահել, վոր մենք այլեւ իրար չըտեսնք...

— Աշխարհում ամեն ինչ կպատահի...

Յեվ մենք նորից լսեցինք...

Յես յերեք չեյի պատկերացնում, վոր այդ աղջիկն իլ կարող ե թափծել, ինձ թվում եր, վոր նրան միայն ժպիտն ե հատուկ: Սակայն նա այդ նույն բովեցին թափծու եր ավելի, քան կարելի յեր մի ուրիշց ըսպասել. նա հուզ ած եր, սակայն առանց արտաքուստ այդ ցուց տալու, մտազբազ, վորպես մեր դեմք փըռված անծայր ծովը: Յես վերցրի նրա ձեռքն իմ ափերի մեջ, ամուր սեղմեցի, իսկ ինչը գրան չընդիմցավ:

Այն միտքը, վոր նա առավոտյան գնում ե, վոր մենք անջատվում եյինք իրարից, թերևս յերբեք նըրան չեմ տեսնելու, ինձ այնքան եր հուզել, վոր դըժվարանում եյի նրա հետ այդ պահին յերկու խոսք խոսել: Յես ուզում եյի միայն գրկել նրան, սեղմել ինձ ու այդպիս լուս ել նրանից անջատվել— հանկարծ ասց նա

— Ավելի լավ կլինի, յեթե տուն գնանք...

Յեվ այդպիս ել լուս մենք վերադարձանք:

Հյուրանոցի սանդուխքներից բարձրանալիս յիս նրան ասացի:

— Բայց միթե, գեթ մի անգամ, մենք չեյինք կարող համբուրզել:

— Ի՞արկե, կարելի յեր, յեթե միայն այդ մի վորե իմաստ ունենար:

— Բայց առավոտյան մենք գեռ կհանդիպենք չե:

— Այդ արդեն ձեր գորն ե...

* * *

Այսոր առավոտյան նա թուավ...

Թոչելուց առաջ, սավառնակակալանում, ամբողջ

ժամանակ մենք միասին եյինք: Նա վերցրեց իմ հաս-ցեն—առանց ասելու, թե ինչու համար. իսկ յերբ պատրաստվում եր թոչելու, այդ յերեք որվա ընթացքում իր ծանոթացած մարդկանց հետ ձեռք տվեց և վերջում մոտեցավ ինձ:

Յես այդ ժամանակ ավելի եյի տխուր, քան ինքո եյի սպասում: Նա մի պահ, իր վառ աչքերով, լուս նայեց, հանկարծ թեքվեց դեպի ինձ և մոտեցրեց իր ըթունքները...

— Թող այս լինի մի վառ հիշատակ: Թերեւ մենք կրկին հանդիպենք...

Այդ նրա վերջին խոսքն եր: Հետո նա թուավ...

Հիմա նա ինձ մոտ չե, բայց յես մտածում եմ, արդյոք, բնչն եր պատճառը, վոր յիս տարվել եյի նրանով: Այն, վոր նա գրավիչ եր, վոր ժպտուն, ուրախ աչքեր ուներ: Բայց չե վոր այնպիսի գրավիչ աղջիկներ մինչև նրան ել յես շատ եմ տեսել: Միթե այն եր պատճառը, վոր նա համաշխարհային անուն եր հանել: Բայց ինչու նրա անունը պետք ե իմ ըգ-գացմաւնքներիս վրա յել ազդեր:

Այժմ յես մտածում եմ—արդյոք, մենք նորից կը-հանդիպենք նրա հետ: Այն յերազուն, այն կենսալից աղջկան միթե յիս կմոռանամ...

1934

ՀԱՅՐԸ

1

Ծովից վերև ամպն ե, իսկ ջրերի վրա՝ որորվող
նավը;

Ջրի ալիքները հաստ-հաստ շերտերով գալիս, կը պ-
չում են նավի կողերին, որորում նրան և ելի հետ
դառնում, ձգվում, ավելի յերկարելով հավասարվում
ջրի հարթության հետ և անհետանում:

Ավելի հեռվում, ալիքներից միայն սպիտակ փր-
փուրն ե յերեռում և թփում ե, թե այդ ճայերն են
մտնում ջրի ալիքների գիրկը, լողանում այնողի, ա-
պա՝ կրկն բարձրանում:

Անզրեյը գուրս ե գալիս նավից, մի պահ միայն
նայում ծովի ալիքներին, անորոշությամբ զլուխը կա-
խում և այզպես մնում տեղում կանգնած:

Հետո հանկարծ ինչ վոր վճռական մի քայլ ե ա-
նում և հեռանում:

Հյուսիսից յեկող ավազախառը քամին դիպչում ե
նրա յերեսին, որորում նրան, ցրում մտքերը, բայց
ելի նա կենտրոնանում ե և դանդաղ քայլերով գնում
դեպի տուն:

Նո իր ընկերներին թողել ե աշխատելիս և ինքը
գնում ե; Նրանք պետք ե ամբողջ դիշերն աշխատեն և
առավոտյան պատրաստի նավը ծով դուրս բերեն.

Առավոտյան ամբողջ քաղաքում յերթ ե լինելու,
իր ընկերները պարզերեսությամբ յերթի յեն դուրս

գալու, իսկ ինքը նրանց մոտ չի լինելու, ինքը, վոր
անընդհատ աշխատել ե նրանց հետ, բայց վերջին
վարկյանում թողնում է նրանց:

Սակայն նա միտամանակ հիշում ե, վոր կինը
տան և մենակը, իսկ մահճակալի վրա յերեխան հի-
վանդ պառկած: Ցեթե նա մնա նավի վրա աշխատելու,
և զիտե, զուցե յերեխան մեռնի, իսկ նրա դիտակի
մոտ՝ մենակ մայրը...

Յեկ Անզրեյ Անզրուխովիչը չի կարողանում վորո-
շել, չի իմանում առաջնությունը վ ըին տալ ու գլու-
խը կտի, ավազախառը քամու ուղղությամբ, քայլում
և դանդաղ:

2

Անզրեյը մտնում ե տուն, մոտենում մահճակալին,
բայց յերեխան չի ժապառ նրան սովորականի պես:

Նրա գույնը դեղնել ե, աչքերը խոր են ընկել և
նա անթարթ հայցը դիպչում է անտարբերությամբ հորն և
նայում:

— Լավ չ՞ — հարցնում ե Անզրեյը, բայց կինը չի
պատասխանում:

Ի՞նչ կարիք կար հարցնելու — մտածում ե Անզրեյը
— քանի վոր ինքն ել և տեսնում, վոր յերեխայի դը-
րությունը գատ ե: Հետո մի կողմից ել ինքն և նըս-
տում յերեխայի մահճակալի մոտ և գլուխն առնում
յերկու ափերի մեջ:

— Ել ի՞նչ ես նստում կողքիս — լրջությամբ նրան
նայելով ասում ե կինը — յերեխան գատ ե...

— Ես, ի՞նչ կարող եմ անել, ի՞նչ կարող եմ...

Յեկ զգոհությամբ նա դուրս ե գալիս, գնում բը-
ժըշկի հետեւից:

81

Ցերը բժիշկը կալիս, նայում է յերեխային, պլու-
խը թափահարելով հարցնում է.

—Թանի ո՛ռ ե, վոր հիվանդ է:

—Վեց:

—Իսկ ինչու յեք նոր բժիշկ կանչում:

—Բժիշկ նայել ե, բայց նա տաել ե —վատանգ չկա:

—Իսկ այժմ տրիեն . . . նու, յես գեղ կորեմ . . .

Բժիշկը կրկին բոնում է յերեխայի զարկերակը,
ունկնդրում սրտի զարկերին, դրած դեղատոմար թող-
նելով սեղանին —լուս դուրս ե զնում:

Մայրն այլևս չի կարողանում զապել իր արցունք-
ները, իսկ Անգրեյը մտածում ե:

Հարցերը կուտակվում են նրա ուզեզի մեջ, ջրա-
պրույտի նման խառնվում իրար ու այդպես ել մը-
նում անպատճան:

Նա հիշում է, վոր տղաները չեն կարող հասցնել,
նավի նորոգումը չեն վերջացնի և առավոտյան, յերբ
բոլորն ել պլանների կատարման կրկնս պատեկի թվե-
րով գուրս կգան յերթի, իրենք սևերես կմնան, վեր-
ջին որերում նրանց թափած այնքան ջանքերն ու բա-
պտութերը չեն արգարանա:

Նա կարծես թե մի առ մի տեսնում է բրիգադի
բոլոր անդամների զեմքերը, վորոնք անհաջողությու-
նից մի տեսակ ձնշվել են և ամոթիսածությամբ վուի-
ները կախել: Այդ բոլորից նրա դեմքը դառնում է
թախծապատ և անհանգիստ կերպով ճնշում է ոիլտը...

—Լուրա, յես զնում եմ...

—Բ՞ւր, —զլուխը բարձրացնելով հարցնում է կինը,

—Աշխատելու:

—Իսկ սրան թնչ ես անում:

82

—Նու, թնչ կարող եմ անել, իմ ներկայությունը
սրան կփրկի:

—Իսկ դու սրտի կտօր ունես, հը: Վախինում են
առանց քեզ չկարողանան այստեղ աշխատել, թնչ :

—Այո, շատունի վրա վոչ վոք չկա աշխատող, իսկ
նա դեռ պատրաստ չե: Եթե շատունը չպատրաստվի,
ուրեմն ավելորդ և նրանց աշխատանքը:

—Զանդամը, թե չին կարող պատրաստել: Թող ե-
գուց պատրաստեն, մյուս որը: Գործը յերեխայիցդ
թանկ ե:

—Նու, գու վոր սկսեցիր, ել քեզ պահել չի լինի —
զգուհությամբ առում ե նա և առանց գլխարկի տնից
դուրս գնում...

3

Զրի հուժկու ալիքները խփում են ու ծանր կեր-
պով որորում խարիսխ ձգած նավը:

Անգրեյը լուս, խավարի միջով անցնում ե, բարձ-
րանում նավի տախտակամածն ու այնտեղից ել գնում
մեխանիկական բաժինը:

Ուղղահաց սանդուխքից ցածրանալիս նրան վոչ
վոչ վոք չի տեսնում, նա մի պահ լուս կանգնում է
կաֆերզամ - տրյումբ* մոտ ու նայում ընկերների յե-
ռուն աշխատանքին:

Նրանք ելեկտրական ճրագները մոտեցրել են կաթ
սաներին, մեքենաներին և բոլորն ել լուս, գլուխները
կախ, չափազանց լարված աշխատում են: Թվում ե,
թե այդտեղ ամեն մի մարդ իրենից բացի վոչ վոքի
չի տեսնում: Նրանք բոլորն ել կուացել են իրենց զոր-
ծի վրա և խորամուզվել աշխատանքի մեջ:

*) Տակառամեկ մի մեծ կաթսա, վորի մեջ պահպուտ և նավի
առվթը կամ մազութը:

83

—Ալեքսեյ—այդ ժամանակ շատունի մոտից Սամարինը կանչում ե բրիգադիրին, բայց Ալեքսեյը չի լսում.

—Ալեքսեյ—կրկին կանչում ե նա—շատունի վիճակը չեն շարժվում, բանալի չկա:

Վերցու յերկաթի կտոր, նրանով խփիր, թող բացի: Բանալիներն Անդրուխովիչի մոտ են մնացել առանց զլուխը բարձրացնելու պատասխանում և Ալեքսեյը: Սամարինը վերցնում է կողքին դրած յերկաթե ունելիքը, ուզում է խփել շատունի զիմավոր պատուտակին, բայց բարձրացած ձեռքը մեկ ել հանդարտությամբ ցած է իջեցնում:

—Ալեքսեյ, վիճակ կփչանա, զուրս բերելուց հետո ել չեմ կարող տեղը գտել:

—Սամարին, ինչե՞ր ես ասում, ինչ կարող եմ անել, այս ուշ ժամանակ ել մեւ կանչեմ:

Սամարինը զլուխը կախում է և շվարած կերպով շատունին նայում: Ուզում է խփել պատուտակներին, բայց ոփսկ չի անում և նորից կանչում է.

—Ալեքսեյ...

—Են կողմը կաց տեսնեմ կաֆերդամ—տրումի հետից դուս գալով ասում ե Անդրեյ Անդրուխովիչն ու նրան մի կողմ հրում:

Սամարինը ապշած, Անդրեյին է նայում: Անդրեյը գրպանից հանում է բանալին և խկույն թուլացնում շատունի պատուտակը:

Յերբ նա կունում է գործի վրա, Սամարինը մտնում բրիգադիրին և ասում:

—Ալեքսեյ, ինձ նոր գործ տուր:

Ալեքսեյն անհանգստությամբ նրան է նայում:

—Սամարին, ուզում ես գործը տապալել ինչու յիս յերեխայություն անում:

—Ի՞նչ ե պատահել—զարմացած հարցնում ե Սամարինը:

—Դժու գու չգիտեմ, վոր այժմ քեզանից բացի վոչ վոք չի կարող շատունը պատրաստել:

—Իսկ Անդրուխովիչը, չե վոր նա յեկել եւ:

Ալեքսեյը մի պահ զարմացած նրան և նայում, նա իսկույն գառնում ե զեպի շատունը, վորտեղ զլուխը կախ աշխատում ե Անդրեյ Անդրուխովիչը:

Ալեքսեյը թողնում է գործը, լրջությամբ մոտենում նրան և ամուր կերպով սեղմելով ձեռքն՝ ասում է.

—Անդրեյ, չնորհակալ եմ..

Անդրեյը զլուխը բարձրացնում է, լուս նայում նրան և կրկին դառնում իր աշխատանքին:

Ալեքսեյը գնալուց հետո, նա ելի մի քիչ աշխատում է և հանկարծ զործը թողնելով մոտենում ե նրան:

—Ալեքսեյ, իսկ մեմ կարող ենք տուն ուզուրկել յերեխայից մի լուր բերելու: Նա շատ վատ է, իսկ մայրը...

—Ում ուղարկենք—մտահոգ ասում է Ալեքսեյը,— հա, Սամարին—կանչում ե նրան: Յերբ Սամարինը մոտենում է, Ալեքսեյը պատվիրում է շտապ կերպով Անդրեյի տունը գնալ:

—Յեթե յերեխան վատ կլինի, դու մտաը կմնաս, մենք այժմ ապահով ենք—նրա հետեխից ասում է Ալեքսեյն ու նրանք անցնում են գործի:

Առավոտյան արեկի խիտ փնջերը քովում են ծովի լայն ջրերի վրա ու հուրհուրում:

Այդ ժամանակ նավի մեխանիկական բաժնից զուրս են գալիս տասնըշորս հոգի — բոլորն ել մրոտ և մազութոտ, սակայն նրանց մրոտ դեմքերի տակից յելը նույն է ծովի վրա փռված արեկի նման մի պարզ ու կարկաչյուն ժպիտ: Նրանք նավի նորոգումը լրիվ վերջացրել են և պատրաստվում են այդտեղից ուղիղ յերթին մասնակցելու:

Նրանց դուրս գալուց հետ Զարբարն իսկույն վազում և նավի գրոշը բերելու, իսկ մյուսները շարք են կանգնում:

Այդ ժամանակ, զլուխը կախ, տխրությամբ մոտենում և Սամարինը:

Յերբ Անդրեյը նրան տեսնում է, վախից սիրտն իսկույն թնդում է: Նա սփրդնած, անմիջապես մոտենում և Սամարինին:

— Յերեխանն զախեցած հարցնում է Անդրեյը:

— Նու, յերեխան . . .

— Ուրիշն մեռավ — իսկույն զլխի ընկնելով ասում է Անդրեյն ու տիրությամբ զլուխը կախում...:

Հետո այդ կես տիսուը ել մոտենում բրիգագիրին և ասում:

— Ալեքսեյ, դուք յերթի գնացեք, իսկ յես... Յերեխային պետք եք թաղել.

Նրա կոկորդը սեղմվում է, ել չի կարողանում շտրունակել և խոսքերի փոխարեն զլորվում են արցունքի ճերմակ կաթիլները...

Ալեքսեյը նույնպես կում եւ նա չի կարողանում միիթարական վոչ մի խոսք ասել ընկերոջը: Թայթ քիչ մտածելուց հետո դիմում է ընկերներին.

— Ծղաներ, մենք պետք եք գնանք Անդրեյի տունը: Յերեխային պետք եք պատվով վերցնել: Նա մերձիման յերեխան թողած տանը, ամբողջ գիշերը մեզ հետ աշխատեց և մեր ամբողջ բրիգագին պարզերս արավ: Դրա համար ել այսոր մենք բոլորս միասին կմասնակցնք Անդրեյի վշտին...

Նրանք բոլորն ել լուս հնագանդվում են բրիգագիրի կամքին: Կարսիր զրոշը բարձր բռնած, շաբքով քայլում են դեպի Անդրեյի տունը:

Իսկ այդ ժամանակ, քաղաքի լայն փողոցներում, փողփողուն արեկի շողերի տակ, թնդում եր ուժգին մի յերաշթախուռք և սկիզբ եր առնում որվա յերթը:

1933

ՊԱՏՄՎԱԾՔ

ԶՅԱՆ ՓԱԹԻՒՆԵՐԻ, ՄԻ ԱՆՎԱԽ ՄԱՐԴՈՒ ՈՒ
ԿՌՎԻ ՄԱՍԻՆ

— Հսկնուկասակը սիրելիս, յես կարող եմ քեզ գես
ավելին պատմել: Յեթե իմ դիմին ծաղկել են մաղերս,
յեթե գու իմ տղան ես ու քո Սեղիկն արդեն ինսը
ամսական և, յեթե գու ընդամենը չորս ամիս և, վոր
կարմիր աստղավոր կոմունարկա յես դնում զլիիդ
այդ գեռ չի նշանակում, վոր յես չեմ կարող ավելի
վառ պատմել ձյան փաթիների, մի անվախ մարդու
ու կովի մասին: Ո՞վ ե ժխտում, վոր տարիներն ագ-
դում են մարդու և զլիի վրա, և հիշողության: Բայց
չե վոր այդ նույն տարիները կարող են վասվող ճը-
րագի պատրույզի շուրջը ծծված ձեթի նման ավելի
բոցավառել մարդու հիշողությունները: Ի՞նչու յես
կարծում, վոր յես վատ կպատմեմ տասնհինգ տարի
առաջ կատարված մի զեպքի մասին: Յես, որինակ,
ավելի վառ եմ հիշում նրան, քան դու պատմում ես յե-
րեկվա ձեր փորձամարտի մասին: Իմ հիշողություննե-
րի եջերը թերթ առ թերթ շրջվում են ու իմ մտապատ-
կերների բլուրների վրա կենդանի կերպով բարձրա-
նում ե իվան Դոլգութովը: Այ, նա պահտկի նման կանգ-

նել ե իմ աչքերի առաջ, հրացանը յերեխային սիրով
մոր պես սեղմել իրեն ու ժպտալով ինձ և նա-
յում... Այս, յես, որինակ, ավելի վառ կարող եմ պատ-
մել իվան Դոլգութովը մասին, քան դու պատմում ես
յերեկվա ձեր փորձամարտից...

* * *

Այդ գիշեր, գեռ լույսը չբացված, ձյան շերտերը
նստել եյին բարձրահարկ շենքերի տանիքների վրա,
լայն փողոցներում, ու փունջ-փունջ կախվել եյին յե-
ղնիների բարակ ճյուղերից:

Բայց առավոտյան, յերբ դեռ վոչ մի քաղաքացի
վոտը տնից գուրս չեր դրել, ձյան այդ հաստ շերտերն
արդեն արորվել եյին փողոցներում և ջուր գառել:

Այդ գիշեր, գեռ լույսը չբացված, ձյան թեթև փա-
թիների հետ, խոր քնի մեջ ընկած քաղաքն եր մտել
բուժեկցան գունդը: Առավոտյան, սովորական յեռ ու
զեռի փոխարշն, բարձրաշն տների պատուհանների
տակով, ընզարձակ փողոցներով, զգաստ շարքերով
անցնում եյին նրանց առույգ զորասյուները:

Դեռ հեռվից յերեսում եյին քաղաքը մտնող թնդա-
նոթակիր սայլաշարքերն ու զորախմբերը, բայց նը-
րանց առաջավոր մասն արդեն հուժկու ձայնով յեր-
դում եր քաղաքում և նրանց վօրոտընդուատ ձայներից
դղրդում եյին բարձրաշն տների պատուհանների ա-
պակիները:

Ընդհանուր խուճապային դրությունն արդեն անց-
նում եր: Յերեկոյան սկսվել եր արդեն սովորական
յերթենեկությունը: Այդ ժամանակ, յերբ դուրս եյի
գալիս տան շքագանից, հանկարծ դիմացից մեկը կան-
չեց.

Ե՞յ, ս՞ա՞ս մի նոր արի.

Նայեցի, — յերկու հոգի եյին՝ շինելներով ու կոմու-
նարկաներով։ Ամուր իրենց եյին սեղմել հրացաններն
ու կանգնել վերկից մաղվող ձյան գորշագույն փա-
թիլների տակ։ Ենս գնացի դեպի նրանց, նրանք ել
մոտեցան ինձ։

— Մեզ կազարման և հարկավոր, մըր և եստեղի
կազարման, — շատ հանգիստ կերպով հարցրեց նրան-
ցից մեկը։

— Կազարման են կողմն և — ասացի յես և նրանք
շտափ-շտափ, բայց հոգնածությունից որորվելով՝ գնա-
ցին ձեռքս մեկնած ուղղությամբ։

— Եյ, սսս — նրանց հետեւից կանչեցի յես և նրանք
խոկույն հետ նայեցին։ Չեռքով արեցի և ինքս ել մո-
տեցա։

— Կազարման շատ ել մոտ չի, իսկ դուք, յերենուս
և, վոր հոգնած եք։ Գուցե մեզ մոտ գնանք, մի թեյ
կիմեր, հետո յես ձեզ ճամբու կցցեմ։

Նրանք մի պահ կանգնեցին և սկսեցին իրար նա-
յել։

— Հօ, ինչ կասես, կարմելյուկ։

— Իմ կարծիքով վատ չի լիսիլ, — ասաց նա և նը-
րանք հետեւեցին ինձ։

Վոչ միայն հոգնած, այլ նաև շաղցած եյին։ Գի-
տեյի, վոր ամբողջ գիշերը կանգնած են յեղել դիր-
քերում ու ցերեկն ել կովի դաշտում և վոչ մի տեղ
հնարավորություն չիյին ունեցել ճաշելու։

Ցերք կինս ափսեների մեջ նրանց առջել գրեց կե-
րակից մնացածը, յես հարցրե։

— Իսկ դուք, ը՝ ը՝ ը...

— Ընկեր ասացեք — իսկույն ինձ հասկանալով՝ ա-
սաց կարմելյուկ։

— Այո, ընկերներ, վժրտեղից եք դալիս։

Այդ հարցի վոա նրանցից մեկը՝ բարձր ձայնով ծի-
ծաղեց և նայելով ընկերոջը՝ ասաց։

— Հօ, կարմելյուկ, իսկապես, վժրտեղից ենք գա-
լիս։

— Յես Պուտիովի գործարանիցն եմ, — լուրջ տոնով
ասաց Կարմելյուկը, — իսկ Դոլգունիովն ել գալիս ե...

— Իսկ յետ ել գալիս եմ իրամոգորսկու գավառից, —
իսկույն ավելացրեց մյուսը, — Արխանգելսկի նահանգ.
դիտե՞ք վորտեղ ե։

— Հա, Խոլմոդորսկ, գիտեմ, Լոմոնոսովի հայրենի-
քըն ե...

— Լոմոնոսովին թողինք Պերեկոպում...

— Ինչպիս թե, զարմացած հարցրի յետ։

— Հա, այնտեղ նա գնդակահարվեց . . . լավ ընկեր
եր . . .

— Իմ ասած Լոմոնոսովը բանաստեղծ եր, Միխայլո
Լոմանոսով, նա վաղուց, շատ վաղուց, և մեռել։

Հմ — յերկարացրեց նա, — վոր այդպես ե, քո եղ
Միխայլոն մեր բանակում չի յեղել։ Իմ իմացածս Լո-
մոնոսովը մնաց Պերեկոպում։

Հետո նրանք լուս և շապափակագին ուտել,
այդ ժամանակ հանկարծ Դոլգունիովը բարձրացրեց
գլուխը, ուղիղ նայեց ընկերոջն ու ասաց։

— Բայց յեթե հազարանոցս մնացած լիներ, այ, ելք
եսպես մի լավ կճաշեյինք համար։

— Հազարանոցդ ես ասում, բայց շատ զոհեր տը-
վինք...

— Ինչ զոհ ե վոր, — հետաքրքրությամբ հարցրի
յետ։

— Մի քանի որ առաջ, են մյուս քաղաքում շատ
զոհեր տվինք... Խամ եյինք, տեղային պայմաններին
անձանոթ, Ընկան ամենալավ ընկերներից...

— Ձեզ թագա հազարանոցս:
— Ի՞նչ հազարանոց, — նորից հետաքրքրությամբ
հարցը յիս:
— Կարմելյուկ, պատմիր — ծիծաղելով ասաց Դոլդո-
ռոխով:

— Եսահս և — սկսեց Կարմելյուկը. — Դոլդոռոխովը նոր
եր փորսող տալով վերադարձել հետախուզությունից:
Ճարպիկն ե. կատվի նման զգուշությամբ անցել ե
թշնամու թիկունքը, ստուգել նրանց ուժերը, ելի հետ
յեկել: Նստել ենք դիրքերում և սպասում ենք, վոր մեր
զորամասը կշրջապատի թշնամուն թիկունքից: Նրանք
այդ չգիտեն և միամատությամբ նստած մեր դիմացի
դիրքերում, ուշագրությամբ մեղ են նայում: Նրանք
ել պակաս ճարպիկները չեն: Գլուխդ բարձրացնում
ես թե չե, գնդակը ծակում ե... Հա, մեր ես Դոլդոռո-
խովն ելի չի հանգստանում: Հենց անընդհատ զլուխը
բարձրացնում ե ու ցածրացնում: Դոլդոռոխովը, շան
վորդի, ասում եմ, հանգստացիր, զլուխդ վրադ ծան-
րություն չի անում: Տես, կնոջդ նամակ գրողը չեմ:
Բայց չե, — նա ինձ չի լսում: Մեկ ել գլուխը բարձ-
րացնում ե՝ թե տեսնեմ ինչ ջուռա մարդիկ են զրանք
անը, հենց այդ ժամանակ գնդակը տպաց և տես-
նեմ իմ ես իվանը ձեռքը դրեց կրծքին Հը, Դոլդոռո-
խով, հարցնում եմ: Թե — բան չկա, ուզեցին կողքս մի
քիչ քորել: Գիտեյին, վոր կեղառուիկել եմ...

— Մի քիչ հետո ձեռքը տանում ե ծոցը, — շարու-
նակեց Կարմելյուկը — շորի քսակի միջից հանում ե
այստեղ պահած բոն հազարանոցը, կախեկախ բռնելով
ասում:

— Վայ դրանց հոր կարկաֆը... հազարանոցս գնդա-
կը ծակել ե...

— Շատ ել լավ ե դառել, ինչու չես հանդպտանում
վոր, — ասացի յիս: Հա, բոն հազարանոցը գնդակը ծա-
կել եր ու հետը տարել նրա համարը և ըսնը անպետ-
քացրել: Դեն շպրտեցինք:

— Անագին զոհեր տվինք, — Կարմելյուկի պատմե-
լուց հետո հեգնանքով ասաց Դոլդոռոխովը:

— Բայց միթե կարելի եր նման կատակներ անել,
չե վոր նրանք կարող եյին ձեզ ել սպանել — ասացի
յիս:

— Ե՞ս, սպանել... ինչ մեծ բան ե. ում չսպանեցին
վոր: Արխանգելսկուց մինչև Անդրկովկաս յեկողը մա-
հից պետք ե վախինար: Հասկանում եք ինչ ասել ե
Արխանգելսկուց մինչև այստեղ գալ: Այդ ասել ե, թե
հրացանն ուսդ առնել, որերով, անգամ ամիսներով
անքուն, առանց անկողնի յերես տեսնելու, ձյունի,
ցրտի, անձրեի ու ցեխի մեջ կոլչակի, Դենիկինի, Պետ
լյուրայի և ելի հազար ու մի նման բանդաների գետ
կով՝ լով, ժայռերից, ծերպերից ցատկուելով, որերով
հողի տակ մնալով գալ, այստեղ հասնել: Իսկ դուք ա-
սում եք — մեռնել... ինչ մեծ բան ե մեռնելը: Հրես
դեռ կովում ենք, գուցե և մեռնենք, ինչ կա վոր:
Չենք կովի, իրենք մեզ կմեռցնեն: Գետմք Յուղենիչն
ինչքան մարդ մեռցրեց, կամ թե Չայկովսկին... Չե
վոր նրանք ել եյին ջահել, զուցե և ինձնից ել ջահել,
բայց նրանք մեռան, վորովինեան պահանջում եր հե-
ղափոխությունը: Նրանք չմեռնեյին, կմեռնեյին ու-
րիշները, կմեռնեյին շատերը: Ո՞վ ի մեռնելուց վախի-
նում վոր:

— Հա, իհարկե, բայց հիմա պետք ե գնալ կազմու-
սան, — հաստատեց կարմելյուկն ու նրանք քվուի
կանգնեցին.

— Ընդհակառակը, սիրելիս, յես կարող եմ քեզ ա-
վելին պատմել, թեև յես չգիտեմ, թե վորտեղ ե իշխան
Դոլգուխովը, Բնչ ե անում նա, բայց իմ հիշողու-
թյունների ըլուրների վրա կենդանի կերպով այժմ
կանգնել ե նա ու ժպտում ե ինձ մի վառ ժպիտով...

1933

94

ԱՐՅՈՒՆԸ

Այժմ յես մենակ եմ, գրասեղանի մոտ նստած:
Մեղանի վրա կապույտ լուսամփոփն ե՝ իր գիրկն
առել ելեկտրական հակինթ լույսը և լուսամփոփից քիչ
հեռու, կարմիր շրջանակի մեջ գրած այն յերկու բա-
նակայինների նկարը: Այժմ նրանցից վոչ մեկն ել ինձ
մոտ չե—գոչ չուսեյնով Մուստաջավը և գոչ ել Զաֆա-
րով Զրաղը: Հիմա գիշեր ե և յերեի նրանք արդեն
պառկել են ճերմակ վրանում՝ յերկնքից կաթող աստ-
ղերի ներքո — իսկ աստղերն այդտեղ ավելի խիտ են
լինում, ավելի ցածր, թվում ե, թե անտառի հաստա-
րուն ծառերի գագաթներից են կախվել փունջ-փունջ
և ուրախ:

Ի՞նարկե, նրանք այժմ ինձ մոտ չեն, սակայն յես
հենց այս բոպեյիս ել տեսնում եմ նրանց ուրախ գեմ-
քը, նրանց ժպտում աչքերը, և թվում ե թե ան նը-
րանք առույգ, կենսուրախ կանգնած են իմ առաջ:

Անա գրչակոթը մոտեցնում եմ թանաքամանին և
այդ պահին իմ առաջ կարծես թե Զրադն ե թեքվում
գեպի Մուստաջավը, իր աշխայից հայցաքով նայում
նրան, շատ կամաց ձայնով ինչ վոր բան ասում և ա-
պա կրկին իր տեղը նստում:

Անա Մուստաջավը — այդ շարքային կարմիր բանա-
կայինը — հանգարտ, խոհեմ բայլերով մոտենում ե ճա-
շասեղանին և նստում դիվիզիայի քաղբաժնի ոկտիբ ու-

95

զիկ դեմուգիմ Նրանից հետո գալիս և Զաֆարովը և
Մուստաջավը Նրան տեսնելուն պես իսկույն կանչում ե.

— Չըազ, ինձ մոտ յեկ, տեղդ պահել եմ...

Իսկ այդ պահին Նրանք իրենց վրա յեն գրավում
ձաշարանում նստած բոլոր ափակ հրամանատարների
ուղագրությունը, այդ միշտ ուրախ, աշխույժ բանակա-
յինները, վորոնք իրենց անձնապահ քայլերով ճամբա-
րում բռնորդ համակրանքն են վայելում

Յևգ գրանք, այդ յերկու առույգ բանակայինները,
վոր իրենց արյունը տալուց հետո Փիզիքապես մի քիչ
թուլացել են, հիմա ճաշում են դիվիզիայի ավագ հը-
րամկազմի ամառային սանատորիայում, հրամանատար-
ների հետ, նորից կազուրբելու և մարտական դիրքե-
րից հետ չմնալու

* * *

Յեկ Զաֆարով Չըազը, Հուսեյնով Մուստաջավը
յերկրորդ տարին և ինչ բանակում են Նրանք յեր-
կուն ել յեկել են կոլխոզից — Հուսեյնով Մուստաջավը
Աղջաբարդուց, իսկ Զաֆարովը՝ Աղդամի շրջանի Իսմա-
յիլ Տեյլիից, Վերջինս գյուղում թողել ե պառավ տա-
տին և Եմբինեյին — իր 9-ը տարեկան փոքրիկ քրոջը ու
կամավոր կերպով զինակոչից առաջ, բանակ և յեկել:

Նրա սիրտը դեպի կարմիր բանակն արթնացրել ե
իր համազյուղացի Գյուղալով Բիլալը, վորը նախ քան
բանակ գնալը միանգամայն անգրագետ եր, կուլտու-
րանակ գնալը միանգամայն անգրագետ եր, կուլտու-
րանակ գնալը միանգամայն անգրագետ եր, կուլտու-
րանակ գնալը միանգամայն անգրագետ եր, կուլ-

տը լուսության փորձված զեկավար:
Չըազն ել եր անգրագետ: Նա միշտ ել ուզում եր
գոնե գրելկարգալ սովորել, նա միշտ սկսում եր և
կիսատ թողնում: Գյուղում աշխատանքի պայմանները

Հսարավորություն չեյին տալիս կանոնավոր կերպով
դպրոց հաճախելու: Այդ իսկ պատճառով ել նա վորո-
շեց ժամանակից առաջ բանակ գնալ և այնտեղից վե-
րադառնալ Բիլալի նման գրագետ դարձած:

* * *

Չըազը բանակում հենց առաջին հրաձգության ժա-
մանակ աշքի ընկավ վորպես լավագույն հրաձիգ:

Գյուղում յերբ նա մեկի մոտ հրացան եր տեսնում,
սիրտն անմիջապես թճում եր, ուզում եր կրակել,
բայց վոչ մի հնարավորություն չուներ կրակելու: Բա-
նակում նա անչափ ուրախացավ, յերբ նրան բացատ-
րեցին, թէ ինչպես պետք ե կրակել: Այդ բացատ-
րությունների ժամանակ նա լսում եր անչափ կլան-
վածությամբ և յերբ առաջին անգամ գնացին հրաձը-
գության, նա յերեք գնդակից տվեց 26 միավոր և ար-
ժանացավ վաշտի հրամանատարի գովասարքին. 2-րդ
հրաձգության ժամանակ դարձյալ 3 գնդակից 200 մետ-
րի վրա տվեց 28 միավոր, վորը համարվում ե գերա-
զանց՝ անգամ ամենավարժ հրաձգի համար:

Սակայն Չըազը գիտեր, վոր Կարմիր բանակում
բավական չե միայն լավագույն հրաձիգ լինել: Հար-
կավոր ե նաև քաղաքական պատրաստականություն,
զրագիտություն: Նրան բացատրեցին ժողկոմի ասածը,
վոր՝

— Մեր մարտիկը վոչ միայն պետք ե գերազանց
կրակի, այլև պետք ե գերազանց ել իմանա, թե ում
վրա յե արձակում իր գնդակը:

Իսկ այդ իմանալու համար պետք ե գրագետ լինել:
Յեկ Չըազը բանակ գալու առաջին իսկ որից հա-
մառ կերպով լծվեց գրագիտություն սովորելուն:

Կարճ ժամանակից հետո նա իր ձեռքով փոքրիկ ըրոջը գրեց առաջին նամակը.

«Եմինե ջան, միադ եմ, վոր ինձ ծաղրում եյիր, թե քեզից մեծ եմ, բայց քեզ չափ ել զրել չգիտեմ: Այ, տեսնում ես, հիմի քո նամակն ինքս եմ զրում, են ել իմ աջ ձեռքով: Հը՝ հիմա ով ե լավ նամակ գրում, յես, թե զու: Ուզում ես որական 9 նամակ գրեմ: Իսկ զու ամիսը մեկն ել չես գրում քո Զրադին: Տեսնում ես թե ով ե մեղնից ծույլ»:

Ապա նա քըոջը ծուլության համար մի քիչ նախատինք տալուց հետո ավելացնում եր.

«Բարես ունեմ, եմին ջան, տատի Դաղլարգյուիին, քեզ, ընկեր Բիլալին, քեռունց Ասկյարին: Եմինե ջան, քեռունց շունը մնում ե. Ենպես մի շուն ել մենք ունենք եստեղ: Յերբ մեր շանը տեսնում եմ, քեռունց շունն ու Ասկյարն ել են միտս ընկնում: Հա, եմինե ջան, բարես արա ձեր վարժուհի Սաքինեիին: Ասա, թող սպասի մինչեւ գամ, վոր իրար հետ վիճարանենք: Նա ինձ շատ եր ծաղրում: Ասում եր բան չես իմանում: Յեվ բարես ունեմ բոլոր հարցնողաց: Մնամ Զրադ Զաֆարով. Բագու քաղաք, փետր. 18, 33 թ.»:

Զրադը բանակում իր ամբողջ եյությամբ հասկացավ ժողկոմի ասածը:

Հենց այդ գիտակցությունը թելադրեց նրան, վոր նա ամենից շուտ առաջ յեկավ, յերբ վաշտի հրամանատարն ասաց, թե՝

—Ով ուզում ե իր արյունը տալ թող մի քայլ առաջ գա...»

* * *

1934 թվի հունիսի 13-ին, Աղը գաղի ստորոտում գնում եյին Հաջիբենդի ճամբարային հավաքի № գընդի գնդացիբային վաշտի փորձամարտերը:

Չորից կուտակ-կուտակ բարձրանալով սպիտակ, բմբուլ ամպերը, մի պահ իրենց զիրկն եյին առնում վաշտի նշանասու բոլոր փիգուրաներին ել ու կրկին անհետանում, իրենց թաց շունչը թողնելով փիգուրաների վրա.

Վաշտի հրամանատարը 900 մետր հեռավորությունից, Աղը Դաղի աջ ուսից ուղղություն եր տալիս զընդպացրորդ Հուգրաթ Բայրամօվին կրակ բաց անելու թշնամու՝ սարի հետևում թագնված հրածգային վաշտի վրա: Թշնամին պատկերացնող պայմանական նըշանները գիշերից պատրաստած թիրախներ եյին, վորոնց ծայրերից կապած թոկից քաշում եր հեռվում խրամատի մեջ թագնված բանակային Զափարով Զըրադը և այդ պայմանական նշաններն անընդհատ շարժման մեջ եյին գտնվում: Զրադն անհամբեր սպասում եր յերկորդ համազարկի վերջանալուն, վորպիսզի թագատոցից դուրս գա արյունքներն ստուգելու, բայց յերկար ժամանակ հրամանատարը համազարկի համար վոչ մի հրաման չեր տալիս:

Այդ ժամանակ հրամանատարի մոտ եր յեկել բժիշկը նրան հայտնելու, վոր իրենց վաշտի բանակային Բյասով Ազիզը, վոր հիմանդանոցում պանկած ե, անհուսալի դրության մեջ ե և յեթե նրա յերակների մեջ մեծ քանակությամբ համապատասխան արյուն չի ներսըսկվի, նա անպայման կմահանա:

Վաշտի հրամանատարն այդ լսելուն պես խկույն

պատարեցնել տվեց փորձնական պարապմունքները և
պատմեց լրությունը:

Հարկավոր եր իմանալ, թե բանակայիններից ով
կհամաձայնի իր արյունը տալ ընկերոջը: Վաշտն ան-
միջապես շարքի կանգնեց: Կարիք չկար դրա նշանա-
կությունը յերկար բացատրելու: Բժիշկը միայն յեր-
կու խոսք ասաց, վոր պետք ե հիվանդին փրկել: Հե-
տո առաջարկեց, թե ով ցանկանում ե իր արյան գը-
նով ոգնել ընկերոջը, թող մի քայլ առաջ գա:

Վաշտի հրամանատարի առաջարկությունից հետո,
ամբողջ շարքն առաջ յերկավ... .

Վաշտում բոլոր բանակայինների արյունն ել նա-
խորոք ստուգվում ե: Այդտեղ յերկրորդ կարգի արյուն
ունեցողներ, իհարկե, շատերը կային, բայց չեր կարե-
լի բոլորի արյունից ել վորոշ քանակությամբ վերց-
նել և ներսրակել հիվանդի յերակները: Ամենաշատը
պետք ե վերցվեր յերկու հոգուց: Իսկ հիվանդն այն-
պես եր արնաքամ յեղել, վոր յերկու մարդուց վերց-
րած արյունը շատ զժվարությամբ կբավարարեր, կամ
այդպիսի գեղքում այդ արյուն տվողներն ել արյան
խիստ պակասություն կունենային: Այնուամենայնիվ
այդ արյունը պետք ե վերցվեր և այդ վերցրին Հու-
սեյնով Մուստաջավից և Զաֆարով Զրաղից—յուրա-
քանչյուրից հինգհարյուր գրամ... .

Հիվանդանոցում աթոռի վրա նրանց նստացնելուց
հետո, յերբ բժիշկն ուզեց Զրաղի աչքերը կապել թըր-
ջած քաթանով, նա զարմացած հարցրեց.

— Բժիշկ, սա ինչու համար ե:
— Վորակեսդի ինքդ չտեսնես—պատասխանեց բժիշ-

կը:
— Իսկ ի՞նչ կլինի, վոր տեսնեմ.

— Կվախենաս:

— Յեռունդա—գլխով թափահարելով և ժպտալով իր
սիրած այդ բառն ասաց Զրաղը և ձեռքը մեկնեց բը-
ժըշկին:

* * *


Այժմ նրանք ինձ մոտ չեն, այդ աշխուժ, այդ մըշ-
տառւրախ և անձնազո՞ն սարտիկները, բայց նրանց
յերկուսի լուսանկարն ել ահա իմ սեղանի վրա յե-
կարմիր շրջանակի մեջ և ժպտում դեմքերն աչքերիս
առաջ, վորոնց առույց վոգին մեր հերոսական բանա-
կըն և կոփել:

Հուլիս, 34 թ. Հայկենդ

Baş mətbuat mydirliği myvəkkilliği № 9082 Sifariş № 1197
Tiraz 5000. Istehsalata verilmiş 1/XII—34. Capa verilmiş 1/I—35
Cap listi 3¹/₄. Kaqyz formatı 62×94.
Azərnəşr mətbəəsində basıldı. 26-lar adına „Kitab saraý“
Bakı, Əli Bajramov kycəsi.

ՑԱՆԿ

1. Վերջին ձիւը	3
2. Արկը	24
3. Տատիկը	35
4. Ich liebe Dich	39
5. Մի փունջ ծաղիկ	43
6. Այն յերազուն աղջիկը	69
7. Հայրը	80
8. Պատմվածք ձյան փաթիլների մի անվախ մարդու և կովի մասին	88
9. Արյունը	96





«Ազգային գրադարան



NL0332412

27118

165

W.B.

8112

MARQAR DAVTJAN
S O N F Ə R J A D
(həkajələr)

AZƏRNƏŞR
Bakı — 1935